10 ՄԱՅԻՍ 2013 ՈՒՐԲԱԹ 77(5160)
Ազգ
Azg
ISSN: 1829-1651

# Վետերանի համար ամենակարեւորը ուշադրությունն է

Վերջին տվյալներով` Հայաստանում ապրում է շուրջ 1855 վետերան, եւ վետերանական գործող կազմակերպությունները 50-ն են: Իսկ Հայրենական մեծ պատերազմին մասնակից ամենասարեց հայ վետերանն արդեն 100 տարեկան է: Ըստ վիճակագրության` վետերանների թիվն ամսեամիս նվազում է:

ՀՀ Վետերանների միավորման խորհրդի նախագահ, գնդապետ **Սիմոն Եսայանը** նշում է, որ այժմ վետերաններին ցուցաբերվող պետական աջակցության հարցում փորձում են առավելագույնն անել, բայց ինչ էլ անեն, վետերաններն ավելիի են արժանի: Վարչապետ **Տիգրան Սարգսյանը** շեշտեց, որ կառավարությունը կփորձի անել ամեն ինչ, որպեսզի վետերանները զգան պետության ու հասարակության ուշադրությունը:

2012 թվականին վետերանների հանգստի ու վերականգնողական



վետերանների համար ամենակարեւորն իրենց հանդեպ ուշադիր վերաբերմունքն է. վետերաններն իրենց լավ են զգում անգամ ամեն մի ջերմ խոսքից: Սիմոն Եսայանը հավելում է, որ վետերաններին պետք է վերաբերվել ավելի հարգալից. «Չէ՞ որ պատերազմում հաղթանակը նրանց հետ չի տրվել»: Իհարկե, վերաբերմունքից բացի` վետերանները կանգնած են նաեւ սոցիալական ու առողջական առաջնային խնդիրների առջեւ:

Երեկ Հաղթանակի 68-րդ տարեդարձի առթիվ «Հաղթանակ» զբոսայգում ՀՀ վարչապետը նշեց, որ բուժման համար պետական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացվել էր 12 միլիոն դրամ: Վետերանները հույսով են, որ դա կլինի շարունական, ու ամեն տարի իրենց դիմումների համաձայն` կուղեգրվեն որեւէ առողջարանային կենտրոն: Հիշեցնենք, որ կառավարության` վետերանների սոցիալական պայմանները բարելավելուն ուղղված միջոցառումների մեջ ընդգրկված է նաեւ 100 վետերանի համար ամեն տարի «Արզնի» առողջարանային կենտրոնում հանգստի ուղեգրերի տրամադրումը:

**Ի. Պ.**

# Բակո Սահակյան. «Կողմնակից ենք մեր երկրի համամասնորեն զարգացմանը»

***Արցախի նախագահ Բակո Սահակյանի հետ այս հարցազրույցը տեղի է ունեցել որոշ ժամանակ առաջ եւ տպագրվել է անգլերենով` Հայկական բարեգործական ընդհանուր միության AGBU ամսագրում: Արցախում այս օրերին տոնակատարություններ են, եւ մենք հարկ համարեցին հարցազրույցի որոշ հատվածներ հրապարակել նաեւ «Ազգում», քանի որ հայաստանյան ընթերցողը հարցազրույցին ծանոթ չէ:***

**- Պարոն նախագահ, դժվա՞ր է լինել փաստացի անկախ եւ միաժամանակ չճանաչված պետության ղեկավար:**

- Այդ հարցը հաճախ են ուղղում ինձ: Ո՞րն է տարբերությունը ճանաչված երկրի եւ չճանաչված երկրի նախագահների. պատասխանում եմ` չճանաչված երկրի նախագահը առաջին հերթին իր գործունեությունը, իր երկրի ներուժն ուղղում է այդ երկիրը ճանաչելի դարձնելուն:



**- Ո՞ր խնդիրներն են Արցախի տնտեսության համար անհետաձգելի, նաեւ` մինչեւ հիմա իրականացված եւ ապագա ծրագրերի մասին խոսենք:**

- Չկա մի ուղղություն, որ կարեւոր չէ երկրի զարգացման համար` գյուղատնտեսություն, արդյունաբերություն, կրթություն, մշակույթ: Քանի որ մենք կողմնակից ենք մեր երկրի համամասնորեն զարգացմանը, հետեւաբար բոլոր ոլորտներն են իրենց նշանակությամբ եւ ազդեցությամբ ուշադրության արժանի: Գյուղատնտեսության զարգացման մասին խոսելով` պետք է նշենք, որ միշտ եղել ենք ագրարային երկիր, այսօր էլ խիստ շահագրգռված ենք այդ ոլորտը զարգացնելու եւ այդ ուղղությամբ բավական քայլեր ենք արել: Մյուս ուղղությունները` էներգետիկա, լեռնահանքային արդյունաբերություն, քաղաքաշինություն եւ այլն, նույնպես կարեւորում ենք: Եվ կարծում եմ, որ համաչափ զարգացումը ամենաօպտիմալ ընտրությունն է: Բարեբախտաբար այս պահի դրությամբ մեր կողմից իրականացվող աշխատանքներն ու ծրագրերը նպաստում են այդ համաչափ զարգացմանը:

**- Գաղտնիք չէ, եւ դա հայերի հպարտությունն է, որ Սփյուռքը մասնակից է Արցախի վերականգնմանը «Հայաստան» համահայկական հիմնադրամի, տարբեր ծրագրերի, անհատների եւ կազմակերպությունների միջոցով:**

- Չկա մի ժամանակաշրջան, լինեն Շարժման, պատերազմական գործողությունների եւ կամ հետպատերազմյան տարիներ, որ Սփյուռքը մասնակից եղած չլինի Արցախի կյանքին: Ռմբակոծված Արցախի վերքերը պետք էր բուժել, եւ հատկապես այդ ժամանակաշրջանում էր կարեւոր Սփյուռքի մասնակցությունը: Իսկ Սփյուռքը միշտ էլ մասնակցություն է ունեցել եւ այսօր էլ մասնակցում է Արցախի շենացմանը: Գաղտնիք չէ նաեւ, որ մեր բոլոր նվաճումներն անմիջականորեն կապված են Սփյուռքի մասնակցության հետ: Այն ծրագրերը, որտեղ ներգրավված են Սփյուռքն ու Սփյուռքի մեր հայրենակիցները, բազմազան են: Մեր հայրենակիցներն իրենց միջոցները, եւ ինչու չէ` մտավոր կարողությունները ներդնում են տարբեր ոլորտներում, հատկապես կրթության ոլորտում: Այս տարիներին հաջողվել է Սփյուռքի մասնակցությամբ վերականգնել տասնյակ դպրոցական, նախադպրոցական հաստատություններ, կառուցվել են նաեւ նորերը:

*Տես էջ 3*

# 12 տարում արտահանումն ու ներմուծումն աճել են նույն համամասնությամբ` մոտ 5 անգամ

## *Ինչպիսի՞ն կլինեն արտաքին առեւտրի ցուցանիշները եւս 12 տարի հետո*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**Հայաստանի նման փոքր եւ սահմանափակ հնարավորություններով շուկա ունեցող երկրի համար զարգացման գրավականն արտահանվող ապրանքների մրցունակության բարձրացումը եւ արտահանման ծավալների ավելացումն են: Այս առումով հետաքրքրական է, թե ի՞նչ փոփոխություններ են կրել մեր արտահանման ծավալները անցած 12 տարիների ընթացքում, ի՞նչ հարաբերակցություն ունեն ներմուծման ծավալների հետ եւ ի՞նչ կարելի է ակնկալել առաջիկայում:**

**2000-ից, երբ Հայաստանը աստիճանաբար սկսեց վերականգնվել 90-ականների փլուզումից հետո, արտահանվել է 300 մլն դոլարի ապրանք: 7 տարի հետո այդ ցուցանիշն աճեց` հասնելով 1 մլրդ 152 մլն դոլարի:**

*Տես էջ 2*

# ԵԱՀԿ գործող նախագահը կայցելի Հարավային Կովկաս

Ամեն անգամ, երբ ԵԱՀԿ-ում նախագահող երկրի փոփոխություն է տեղի ունենում, առաջնահերթություններ են հայտարարվում, ու դրանց մեջ մշտապես տեղավորում են հակամարտությունների լուծմանը նպաստելու «պատրաստակամությունը», ոմանք էլ անգամ ինչ-որ քայլեր են փորձում ձեռնարկել, առայժմ անարդյունք:

Հիմա էլ ԵԱՀԿ գործող նախագահն Ուկրաինայի արտգործնախարար Լեոնիդ Կոժարան է, որը, պարզվում է, հունիսի 17-20-ը այցելելու է հարավկովկասյան տարածաշրջան: Այդ մասին, ըստ ԵԱՀԿ պաշտոնական կայքէջի, տեղեկացրել է ինքը` Կոժարան, մայիսի 8-ին Վաշինգտոնում` ԱՄՆ Հելսինկյան կոմիտեում տեղի ունեցած քննարկման ժամանակ:

Հրաշալի է, երբ ԵԱՀԿ գործող նախագահն իր երկրի համար առաջնահերթություն է հայտարարում «հակամարտությունների լուծման հարցում առաջընթացի գրանցումն ու մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանությունը»: Կոժարայի ընդգծմամբ` տարածաշրջանի անվտանգության համար կենսական նշանակություն ունի ձգձգված հակամարտությունների հարցում առաջընթացի գրանցումը, որի պատճառով էլ ԵԱՀԿ գործող նախագահի առաջին պաշտոնական այցը եղավ Մոլդովա:

Ուկրաինայի ԱԳ նախարարն այս համատեքստում էլ տեղեկացրել է, որ հունիսի 17-20-ը կայցելի Հարավային Կովկաս: Միեւնույն ժամանակ, Լեոնիդ Կոժարան իր աջակցությունն է հայտնել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին` «ընդգծելով հրադադարի ռեժիմի խստագույնս պահպանման» անհրաժեշտությունը:

Այս ամենը լիովին տեղավորվում է հայկական կողմի` հակամարտության լուծման տրամաբանության մեջ, սակայն դժվար թե Ադրբեջանում այսպիսի մոտեցումները դրական արձագանքի արժանանան: Եվ ամենայն հավանականությամբ, նախորդ գործող նախագահների նման, Ուկրաինայի արտգործնախարարն էլ բարի ցանկություններով կսահմանափակվի:

**Վ. Պ.**

# Մոսկվայի զորահանդեսն աչքի ընկավ տեխնիկայի աննախադեպ քանակությամբ



**Հայրենական Մեծ պատերազմում տարված հաղթանակի 68-րդ տարեդարձի առթիվ 2013 թ. մայիսի 9-ին Մոսկվայում անցկացված զորահանդեսն աչքի ընկավ ցուցադրված ռազմական տեխնիկայի աննախադեպ քանակությամբ: Զորահանդեսներին մարտամեքենաների մասնակցության ավանդույթը Ռուսաստանում վերականգնվել էր 2008 թվականին:**

**Կարմիր հրապարակի սալահատակի վրայով երեկ 12 րոպեում անցավ 101 միավոր ռազմական տեխնիկա, հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը: Խումբ-խումբ անցան Turp զրահապատ ավտոմեքենաներ, T-90A տանկեր, Meta-C ինքնընթաց հրետակայանքներ:**

**Մեքենայացված շարասյան կազմում անցան Тополь-М շարժական հրթիռահամալիրներ, С-400 триумф զենիթահրթիռային համակարգի արձակման կայանքներ, նորագույն զենիթային հրթիռաթնդանոթային համալիրներ եւ այլն:**

**Հանդիսությանը մեծ դիտարժանություն հաղորդեց ՌԴ օդուժի 68 զանազան ինքնաթիռների եւ ուղղաթիռների մասնակցությունը: Ավիատեխնիկայի ցուցադրությունն ավարտվեց СУ-25БМ գրոհիչ ռազմօդանավերի թռիչքով, 300 մետր բարձրության վրա անցնելով` մեքենաները ծուխ արձակեցին եւ երկինքը գունավորեցին ռուսական դրոշի երեք գույներով:**

**Մոսկվայում ժամը 22-ին տոնակատարությունն ավարտվեց գունագեղ հրավառությամբ:**

**Պ. Ք.**

# ԶԼՄ-ն միայն հեռուստատեսությունը չէ

Մտահոգիչ միտում է նկատվում մեր լրատվական դաշտում: Թեպետ զանգվածային միջոցները շատ են, սակայն, չգիտես ինչու, պետական կառույցներում ԶԼՄ ասելիս հասկանում են հեռուստատեսություն: Վերջին շրջանում պետության կարեւորագույն դեմքերը, ովքեր հազվադեպ են ելույթ ունենում, նախընտրում են հարցազրույցներ տալ միայն հեռուստաընկերությունների մի քանի ներկայացուցիչների: Վերջին հինգ տարվա ընթացքում նախագահ Սերժ Սարգսյանն ընդամենը մեկ անգամ է ասուլիս կազմակերպել զանգվածային լրատվության բոլոր ներկայացուցիչների համար՝ թերթեր, ռադիոներ, կայքեր ու հեռուստատեսություն: Նախագահը հազվադեպ հարցազրույց է տալիս միայն մի քանի հեռուստաընկերությունների ներկայացուցիչներին, ավելին, Սերժ Սարգսյանն իր արտասահմանյան այցելությունների ժամանակ էլ հիմնականում նախընտրում է, որ իրեն լուսաբանեն հեռուստաընկերությունները: Անշուշտ, հեռուստատեսությունը համարվում է զանգվածային ամենատարածված միջոցը, սակայն թերթերն էլ իրենց առջեւ դնում են լուսաբանման այլ խնդիր, այլ մոտեցումներ եւ առավել համապարփակ ու բովանդակային հոդվածներ են ներկայացնում:

Նույն տրամաբանությամբ եւ գործելաոճով է աշխատում նաեւ վարչապետ Տիգրան Սարգսյանը: Իր պաշտոնավարման առաջին 2-3 տարիներին վարչապետը նախընտրում էր մի քանի հեռուստաընկերությունների հարցազրույցներ տալ, արտասահմանյան այցերի ժամանակ վարչապետին ուղեկցում էին միայն վերոնշյալ լրատվատեսակի ներկայացուցիչներ, հիմա վարչապետն ընդհանրապես ասուլիսներ կամ հարցազրույցներ չի տալիս ու սահմանափակվում է միայն կառավարության նիստերի ժամանակ արված ելույթներով:

Միշտ լուռ, առանց ասուլիսների ու հարցազրույցների է ընթանում նաեւ քաղաքապետ Տարոն Մարգարյանի գործունեությունը: Բազմաթիվ խնդիրներ, կուտակված հարցեր կան, որոնք լրագրողներն այդպես էլ չեն կարողանում տալ Մարգարյանին: Քաղաքապետը խուսափում է լրատվամիջոցներից, հատկապես թերթերից եւ կայքերից:

Հայկական եւ միջազգային բազմաթիվ կազմակերպությունների վերլուծություններում մշտապես ասվում է, որ Հայաստանում զանգվածային լրատվության միջոցներից առավել ազատ են թերթերն ու կայքերը, փակ ու վերահսկելի՝ հեռուստատեսությունը: Աններդաշնակ նախապատվություն տալով հեռուստատեսությանը՝ տպավորություն է ստեղծվում, որ մեր պաշտոնյաներն ու նրանց մամուլի քարտուղարները ոչ թե բաց աշխատանքի կողմնակից են, այլ նախօրոք պատրաստված հարցերի միջոցով հարցազրույց անցկացնելու:



Երկու օր առաջ «ԶԼՄ ներկայացուցիչների հետ» մի հանդիպում էլ կազմակերպել էր պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը: Հանդիպումն ընտրյալ 4-5 հեռուստաընկերության ներկայացուցիչների համար էր: Թե ինչ սկզբունքով էին ընտրվել այդ լրատվամիջոցները՝ այդպես էլ պարզ չդարձավ: Թեպետ Օհանյանը նախընտրում է քիչ թե շատ բաց աշխատել եւ տարվա մեջ գոնե մեկ անգամ ամփոփիչ ասուլիս կազմակերպել, սակայն նման գործելաոճը դառնում է մտահոգիչ: Հույս ունենանք, որ դա չի դառնա ավանդական նաեւ այս գերատեսչության համար, եւ վերաբերմունքը թերթերի, ռադիոկայանների ու կայքերի լրագրողների հանդեպ կլինի նույնը, ինչ հեռուստատեսությունների նկատմամբ:

Գուցե այս պարագայում որեւէ լրատվամիջոցի էլ չհրավիրե՞ն, իրենք հարցերը տան, հարցերին պատասխանեն, նկարահանեն ու պատասխանները տարածեն: Միայն թե այդ պարագայում դժվար կլինի ասել՝ մամուլի ազատությունը ո՞րն է ու քանի՞ լրատվամիջոց կցանկանա այդ կերպ աշխատել: Այս պարագայում պետք է դիմել նաեւ գործընկերներին, որպեսզի նրանք չլուսաբանեն կամ կցուցադրեն պաշտոնյայի ելույթը կամ հարցազրույցը, եթե իրենց այդ միջոցառմանը կամ հարցազրույցին չեն հրավիրել:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# 12 տարում արտահանումն ու ներմուծումն աճել են նույն համամասնությամբ՝ մոտ 5 անգամ

*1-ին էջից*

**Սակայն հաջորդ 2 տարիներն արտահանման ծավալները նվազեցին: Ընդ որում 2009-ին կազմեց 710 մլն դոլար՝ հասնելով 2004-ի ցուցանիշին: Դա պայմանավորված էր համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով, երբ ոչ միայն նվազեցին արտահանվող ամենամեծ ապրանքախմբի՝ մետաղների ծավալները, այլեւ դրանց գները միջազգային շուկաներում: Այդուհանդերձ, 2010-ին արտահանումը դարձյալ կրկին կտրուկ աճեց, ինչն այս անգամ էլ հիմնականում պայմանավորված էր միջազգային շուկայում մետաղների գների բարձրացմամբ ու նաեւ դրանց արտահանման ծավալների ավելացմամբ: Արտահանման աճի միտումը շարունակվեց նաեւ 2011-ին եւ 2012-ին: Անցյալ տարի Հայաստանից արտահանվել էր 1 մլրդ 428 մլն դոլարի արտադրանք: Ընդ որում, ավելացել էին նաեւ այլ ճյուղերի, հիմնականում սննդամթերքի արտահանման ծավալները՝ 2000-ի ցուցանիշը գերազանցելով գրեթե 5 անգամ:**

**Միաժամանակ, ներմուծման ծավալները անցած 12 տարիներին նույն կերպ են փոխվել, դարձյալ աճելով գրեթե 5 անգամ: 2000-ին Հայաստան է ներմուծվել 884 մլն դոլարի ապրանք: 8 տարի հետո այդ ցուցանիշն աճեց՝ հասնելով 4 մլրդ 426 մլն դոլարի, իսկ 2009-ին դարձյալ կտրուկ նվազեց: Ճգնաժամի պատճառով Հայաստանում նվազեց սպառումը, հետեւաբար եւ ներմուծումը: Հետագայում նույնպես ներմուծման ծավալները աճեցին, բայց միայն 2012-ին հասան 2008-ի ցուցանիշին՝ կազմելով 4 մլրդ 266 մլն դոլար: Այսինքն, վերջին տարիներին արտահանման աճի տեմպն ավելի բարձր է եղել եւ գերազանցել է ներմուծման աճի տեմպը: Սակայն հետաքրքրական է, որ, այդ ամենով հանդերձ, 2012-ին ներմուծման ծավալները շարունակում են գերազանցել արտահանման ծավալները 3 անգամ: Պարզապես, անցած ժամանակահատվածում եղել են տարիներ, երբ ներմուծումն արտահանմանը գերազանցել է 3-ից ավելի, ընդհուպ 4 անգամ, ինչպես օրինակ՝ 2008-ին:**

**Իսկ ինչպե՞ս կփոխվի արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը առաջիկա տարիներին: Դատելով վերջին տարիների արտահանման առաջանցիկ աճից, ինչպես նաեւ տնտեսության իրական հատվածին եւ հատկապես արտահանման ուղղվածություն ունեցող արդյունաբերությանը պետության աջակցության ծրագրերից, կարելի է ակնկալել, որ առաջիկա տարիներին բացասական հաշվեկշիռը կնվազի: Թե որքա՞ն, բնականաբար հնարավոր չէ հստակ ասել: Կառավարության մշակած Հայաստանի զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսվում է, որ եւս 12 տարի անց արտահանման-ներմուծման բացասական հաշվեկշիռը կպահպանվի, բայց չնչին տարբերությամբ: Համաձայն այդ փաստաթղթի՝ 2025-ին արտահանումը կկազմի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 42,5 տոկոսը, իսկ ներմուծումը՝ 46,1 տոկոսը: Գումարային առումով, ըստ նույն ռազմավարության, ակնկալվում է արտահանումը հասցնել մոտ 13 մլրդ դոլարի, իսկ ներմուծումը՝ մոտ 14 մլրդ դոլարի: Սա բավականին հավակնոտ կարող է թվալ, քանի որ ենթադրում է արտահանման մոտ 9 անգամ աճ անցած տարվա ցուցանիշի համեմատ: Սակայն, ինչպես արդեն նշեցինք վերեւում, բացի արտահանման ծավալների առաջանցիկ աճից, մեր երկրի նման փոքր երկրի համար այլընտրանք պարզապես գոյություն չունի:**



# Փողոցի նորեկը

Երեւանյան սովորական փոքր փողոցներից է Հակոբ Հակոբյան փողոցը, ապրում է սովորական իր առօրյան, ուշագրավ ոչինչ չկա պրոլետարիատի բանաստեղծի անունը կրող այս փողոցում: Երբեմն-երբեմն ամռանն ասֆալտվող մայթեր (ավելի շուտ ընտրությունից ընտրություն), երեկոները կիսամութի մեջ ընկղմված, ձմռանը սառցաշերտի այնպիսի հաստությամբ, որ թվում է, բնավ չի հալվելու: Փողոցի նշանավոր եւ ժամանակին գիտաարդյունաբերական ստրատեգիկ կենտրոն հաշվիչ մեքենաների Մերգելյանի ինստիտուտը այլեւս շատ հեռու է նախկին առաջատար բնույթից ու նշանակությունից: Վերջին շրջանում այս հիմնարկում շատ են անցկացվում տարաբնույթ էքսպո-ցուցադրություններ: Դիմացի այգին, ժամանակին բաց զբոսայգի-հանգստավայր էր, թեեւ՝ փոքր. հիմա այդ տարածքը բնակեցրել են սրճարաններն ու զանազան կրպակները, նարդի-շախմատի տախտակներն ու մանկական կարուսելները: Օպտիմալ լուծում են գտել՝ փոքր տարածքի վրա խտացնել առեւտրի, շահույթի ամենահնարավորը: Առհասարակ այս փողոցի մայթերն օգտագործված են հնարավորինս արդյունավետ: Շուկան ամենաաշխույժ հատվածն է, մայթի կեսը զբաղեցրած: 6-7 տնտեսական ու մթերային խանութ, 2-3 ատամնաբուժարան, մի այդքան նորաձեւության կետ, 3 դեղատուն, 3 գեղեցկության սրահ, լեզուների՝ 2 թե 3 ուսուցման կենտրոն, տարադրամի ոչ մի փոխանակման կետ, 2-3 կոշկակարանոց, որոնցից մեկի՝ նեղ մարդաբոյ չհասնող բարձրությամբ ու երկարությամբ տարածքում նստած մարդը փիլիսոփայական մտորումներ ունի, կյանքի, մարդկային հոգու հավերժական գոյության, վերամարմնավորման եւ պատկերացում է տալիս հետաքրքրվողին՝ հատուկ գիտությամբ կազմված աղյուսակով անցյալ կյանքերի ու կարգավիճակների մասին:

Կենցաղային անհրաժեշտության բոլոր սպասարկման ձեւերն այստեղ կան, եւ բնակչին հարմարավետ է մոտակա կետերից օգտվելու այս ձեւը: Չես էլ սպասում գրավիչ, անսովոր մի նորություն, որովհետեւ փողոցը հագեցած է բավականաչափ: Բայց ահա մի օր անձրեւից հետո բուսած սունկի պես հաճույք պատճառող, աչքառու կարմիր տառերով գրությունը շենքերից մեկի 1-ին հարկի ճակատին, վրիպել չէր լինի: Կարծում եմ՝ բոլորն անմիջապես դա տեսան՝ ոչ բար, ոչ սրճարան կամ զվարճատեղի, ոչ էլ կենցաղային սպասարկման հերթական օբյեկտ է: Շենքի այս մասում կարմիր տառերով գրված է ԳՐԱՏՈՒՆ: Գրատներ այսօր Երեւանում քիչ կան, եղածներն էլ կենտրոնական կամ գոնե մեծ փողոցներում են: Մեր այս Հակոբյան փողոցը աննշան տեղ է, տեսնես ինչ են մտածել այս մարդիկ: «Բարեկամություն» մետրոյի գետնանցուղու սանդղահարթակների մի փոքր հատվածում մի օր հայտնվեց գրքերի փոքր կրպակ, որը բնականաբար կոշկեղենի, հագուստեղենի, դիմահարդարանքի պարագաների մրցակցությանը չդիմացավ եւ արագ փակվեց: Մեր փողոցի գրատունը, սակայն, ապագա խոստանում է, օրեր անց կողքի պատին փակցվեց Print-ի մեծադիր պաստառը՝ համապատասխան ծառայության ծանուցմամբ: Բուն գրատունը համալրված է, եւ հիմնական անհրաժեշտ տեսականին՝ գրենական պիտույքների եւ գրասենյակային առարկաների, կան: Սակայն ինձ հետաքրքրողը գրքերի բաժինն էր, որի հիմնական մասը մանկական գրականությունն է՝ հայերեն եւ ռուսերեն, աֆորիզմների բրոշյուրներ, երկլեզվյա բառարաններ: Գրատան աշխատողները առայժմ գրականության՝ հատկապես գեղարվեստական, լայն տեսականի, վարանում են ներկայացնել, պահանջարկի առումով վստահ չեն: Շուկայում այս ոլորտն իմացող մարդկանցից շատերը աբսուրդ են համարել ներկա պայմաններում գրատուն բացելը: Գրատան պատերին Մարկեսի եւ մի երկու դարձյալ հայտնի գրողների նկարներն ու աֆորիզմներն են փակցված, բայց նրանց ստեղծագործությունները առայժմ վարանում են մուտք գործել վաճառք:

Թվում է սովորական բան է եւ արտառոց, զարմանալու ոչինչ չկա: Սակայն մեր կյանքի տրամաբանությունն այնպիսին է, որ զարմացնում են մարդիկ, ովքեր սկսում են մտածել մարդու հոգեւոր պահանջները բավարարող բաների մասին: Միջավայրի նորեկը անսովոր-խորթ անծանոթի պես զարմացրեց շատերին:

Այս մասին գրում եմ զուտ այն բանից հետո, երբ ականատեսը եղա, թե ինչպես կողքի վարսավիրանոցի աշխատակցուհիները ուրախությամբ միմյանց տեղեկացնում էին դրացի նորեկի մասին: «Վերջապես,- ասում էր նրանցից միջին տարիքի կինը,- երեխային գիրք, տետր եւ նման բաներ են անհրաժեշտ լինում, եւ չգիտենք, որտեղից գնենք. պիտի հասնենք կենտրոն, իսկ հիմա՝ ինչ լավ է, կողքներիս է»: Մտածել, թե միայն դեֆիցի՞տն է պատճառը այս վերաբերմունքի- բայց չէ՞ որ մարդ արարածը մարմնականի մասին հոգ տանելուց ու զվարճանալուց բացի, ունի նաեւ ոչ պակաս կարեւոր մեկ այլ պահանջ եւս՝ հոգեւոր ու մտային սնուցման պահանջ. թե չէ քաղաքը լցված է միայն կենցաղի ու զվարճանքի կետերով: Նման տրամադրությունների մեջ միշտ հիշում եմ 15-20 տարի առաջ 2-րդ անգամ Հայաստան եկած ֆրանսահայ մտավորականի խոսքը, երբ իմ տրտունջներին ի պատասխան ասաց. «Պիտի հղփանան, որ հագենան»:

Մարդու բնույթը, պահա՞նջն է այսպիսին՝ ցանկությունների ծով այս կյանքում:

**Ս. Բ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Անցուդարձ

*1-ին էջից*

Սփյուռքը մասնակցում է մեր ենթակառուցվածքների վերականգնմանը, եւ մենք կարեւորում ենք նաեւ ապագային ուղղված մեր համատեղ աշխատանքները: Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Սփյուռքի առաջին կազմակերպություններից էր, որ սկսեց տարբեր ծրագրեր իրականացնել Արցախում: Քաջատեղյակ եմ, որ ոչ միայն Արցախում, այլեւ ամբողջ աշխարհում է Բարեգործականն այդ ծրագրերն իրականացնում: Բազմիցս հնարավորություն եմ ունեցել ող-

անցած տարի մենք ունեցել ենք 11362 զբոսաշրջիկ՝ ըստ վիճակագրական ծառայության տվյալների: Իսկ 2012 թվականի առաջին կիսամյակի տվյալների համաձայն՝ մոտ հիսուն տոկոս անցած տարվա համեմատ զբոսաշրջիկների թիվն ավելացել է: Բայց հաշվի առնելով մեր երկրի յուրահատկություններն ու նրա բավականին ընդգծուն ինտեգրվածությունը Հայաստանի Հանրապետությանը, վիճակագրության ծառայության մասնագետները գտնում են, որ զբոսաշրջիկների թիվն ավելին է, քան իրենց կող-

**նակ դարձավ, ինչը նույնպես տնտեսության զարգացման խթան է:**

- Այո, մեզ հաջողվել է նման աշխատանք եւս կատարել՝ այսօր «ԱրցախՀԷԿ» ընկերությունը թողարկում է արժեթղթեր: Սա մեր առաջին փորձն է եղել՝ միջազգային մասնագետները այն համարում են հաջողված: Եվ դա բավականին ոգեւորում է մեզ, որովհետեւ մենք համարում ենք, որ ստեղծված են բարենպաստ պայմաններ նաեւ ներդրումներ իրականացնելու համար: Եվ մենք ունենք բազմաթիվ այդպիսի փորձեր

# Բակո Սահակյան. «Կողմնակից ենք մեր երկրի համամասնորեն զարգացմանը»

ջունելու այդ համահայկական այդ կազմակերպության գործունեությունը, նրա ազնիվ բարերարների նվիրատվությունները: Այսօր էլ ընդհանուր միության հետ ծրագրեր ունենք համատեղ՝ ուղղված մեր երկրի շենացմանն ու զարգացմանը: ՀԲԸՄ-ն կառուցել է բազմաթիվ բնակարաններ՝ բնակարանային հիմնախնդիրն Արցախում մինչեւ հիմա էլ մնում է ամենակենսականներից մեկը: Բարեգործականը կառուցել եւ շարունակում է կառուցել բնակարաններ այնպիսի շրջաններում, որտեղ ավելի շատ էին պահանջված այդ բնակարանները, իրականացրել է կրթական ծրագրեր, մասնակից է «Հայաստան» համահայկական հիմնադրամի ծրագրերին, բազմաթիվ առողջապահական հաստատություններ կառուցվել են հենց Բարեգործականի մասնակցությամբ:



**- Անցած տարի, երբ հանդիպեցիք ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանի հետ, լրատվություն եղավ, որ այդ ծրագրերն ավելի ուղղորդված եւ նպատակային պետք է դառնան:**

- Պերճ Սեդրակյանի հետ հանդիպումից մեծ գոհունակություն եմ ստացել, քանի որ նա, լսելով իմ առաջարկություններն ու այսօրվա Արցախի առաջնահերթությունները, հավանություն է տվել իմ ծրագրերին՝ կրթական համակարգում Բարեգործականի մասնակցության մասով. մենք շատ ենք կարեւորում կրթական համակարգի զարգացումը: Քանի որ ՀԲԸՄ-ն լուրջ փորձ ունի այս բնագավառում, առավել քան համոզված եմ, որ մեր համատեղ ջանքերով կկարողանանք ունենալ ժամանակակից կրթական մի հաստատություն, որը հնարավորություն կտա պատրաստելու այսօրվա տնտեսության պահանջներին եւ հրամայականներին համապատասխան մասնագետներ:

**- Նկատի ունենալով Արցախի՝ աշխարհի գողտրիկ անկյուններից մեկը լինելու հանգամանքը, կարելի՞ է հույս ունենալ, որ ապագայում զբոսաշրջությունը շատ լավ կզարգանա եւ կդառնա Արցախի առաջատար ճյուղերից մեկը:**

- Քանի որ նշեցի, որ մենք կողմնակից ենք մեր երկրի համաչափ զարգացմանը, այդ զարգացման մեջ ես նկատի ունեմ նաեւ զբոսաշրջության ոլորտը, եւ դուք ճիշտ եք, մեր երկիրն ունի այդպիսի նախադրյալներ. հասկապես զբոսաշրջությունը զարգացնելու ենք եւ այդ ոլորտում մենք այս տարիների ընթացքում համեստ հաջողություններ ենք արձանագրել: Եթե թվերի լեզվով խոսելու լինենք՝

մից ներկայացված պաշտոնական թվերն են:

**- Արցախի ենթակառուցվածքները պատրա՞ստ են ավելի շատ զբոսաշրջիկներ ընդունելու:**

- Այս պահին անհամեմատելի են նախկինի համեմատ մեր հնարավորություններն ու պայմանները. կառուցվել են մի շարք նոր հյուրանոցներ Ստեփանակերտում եւ Շուշիում, Հադրութ քաղաքում հնարավորություն ունենք զբոսաշրջիկներ ընդունելու, այնտեղ նոր կառուցված հյուրանոց է շահագործման հանձնվել: Մարտակերտի շրջանում Լեւոն Հայրապետյանի աջակցությամբ նույնպես հյուրանոցներ են կառուցվել՝ զբոսաշրջիկների զգալի մասն ուզում է լինել Գանձասարում եւ Վանք գյուղում՝ տեղում նրանց ընդունելու հնարավորություն կա:

**- Շուշին վերստին մշակութային կենտրոն դարձնելու նպատակադրումը կարո՞ղ է խթանել զբոսաշրջությունը:**

- Արդեն իսկ նպաստում է: Այսօր նույն Շուշի քաղաքում հաջողվել է նույն Սփյուռքի մասնակցությամբ բազմաթիվ կենսական նշանակություն ունեցող կառույցներ ստեղծել՝ առողջապահական հաստատություններ, գրադարան, ճանապարհներ են կառուցվել:

**- Չնայած չճանաչված լինելուն՝ Արցախը պետություն է իր բոլոր կառույցներով, պետական իշխանության բոլոր թեւերով ու ատրիբուտներով, շատ բարձր մակարդակով կայացած վերջին նախագահական ընտրություններով: Իսկ Կոսովոն չունենալով այդ բոլորը՝ միանգամից ճանաչվեց որպես անկախ պետություն: Արցախը նաեւ համաշխարհային ներդրումների մեխանիզմ ունի՝ նկատի ունեմ Սարսանգի ՀԷԿ-ի կառուցումը, որը արժեքների շուկա մտնելու օրի-**

ինչպես էներգետիկայի ոլորտում, այնպես էլ լեռնահանքային արդյունաբերության մեջ: Մենք շահագրգռված ենք այդ հնարավորություններն օգտագործել, որոշակի արտոնություններ սահմանել ներդրողների համար, եւ նրանք, համեմատելով մեր պայմանները այսօրվա աշխարհում գործող պայմանների հետ՝ շատ մատչելի կգտնեն Արցախում ներդրում անելը, անգամ ինչ-որ տեղ նաեւ զարմանք առաջացնող հնարավորություններով: Համեմատություններ են անում եւ ասում, որ շատ քիչ երկրներ կան, որ եկամտահարկը եւ շահութահարկը կազմում են հինգ տոկոս, այլ գրավիչ հնարավորություններ ու արտոնություններ են նշում: Հետեւաբար այդ ամենը նպաստում է ներդրումներ ներգրավելուն: Եվ մենք շահագրգռված ենք դրանում, կառավարությունը ժամանակ առ ժամանակ վերանայելով նախկին հնարավորությունները, միշտ փորձում է ընդգծված հարմարավետ հնարավորություններ ստեղծել՝ ավելի մեծ ներդրումներ ներգրավելու համար:

**- Ովքե՞ր են գնում արժեթղթերը:**

- Աշխարհագրությունը բավականին մեծ է, եւ դա էլ է ուրախացնում մեզ՝ Եվրոպայի երկրներից, մեր հայրենակիցները Հայաստանից, ԱՄՆ-ից: Շատ հաճելի է, քանի որ դա նոր ուղղություն է մեր երկրի տնտեսության համար, նույնիսկ արցախցիներն էլ են ներգրավվում արժեթղթեր գնելու գործում: Արդեն էներգետիկայի ոլորտում երրորդ տարին է, ինչ բաժնետոմսերը թողարկվում են, եւ ոլորտի պատասխանատուները ասում են, որ մեր բնակչութունը ցանկություն ունի իր մասնակցությունը բերելու, ինչպես նաեւ Սփյուռքի մեր քույրերն ու եղբայրներն են հետաքրքրված:

*Հարցազրույցը վարեց*
*ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ*

### ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

# Թեհրանի հայոց թեմն այս տարի ունելու է «Զանգ» ընկերությանը

**Ըստ Թեհրանի հայոց թեմի թեմական խորհրդի ընթացիկ արեգակնային 1392թ. (2013-2014թ.) տարեկան նախահաշվի, «համայնքի ծախսերը փակելու համար», նախատեսված է այս տարի վաճառել ազգային կալվածներից «Զանգ» ընկերությունը, 40 միլիարդ ռիալի դիմաց (մոտ մեկ միլիոն ու 200 հազար դոլար), որը պիտի լցվի համայնքի բյուջեի բացից առաջացած անտակ հորի մեջ, որ վերջում էլի միլիարդավոր ռիալ բաց է մնալու:**

**Հիշատակենք, նախահաշվում թեմի եռեջնորդ Սրբազան հոր եւ նրա օգնականի կեցության ծախսը կազմում է 2 միլիարդ 200 միլիոն ռիալ, իսկ Թեհրանի հայոց թեմի ողջ քահանաների ռոճիկն ու հատուցումը՝ մեկ միլիարդ 250 միլիոն ռիալ, Կարիքավորներին օժանդակող մարմինը նույն ժամանակահատվածում կարող է ծախսել մեկ միլիարդ 276 միլիոն ռիալ: Դաշնակցություն կուսակցության օղակներից համարվող ՀՈւՍԿ հաստատության «Պայման» եռամսյա թերթի տպագրությանը, որը տպվում է կուսակցությանը պատկանող «Ալիք» տպարանում, նախատեսված է հատկացնել 600 միլիոն ռիալ:**

**Եվ հավելենք, որ Թեհրանի հայոց միջնակարգ դպրոցների համար նախատեսված է ծախսել ընդամենը մեկ միլիարդ 380 միլիոն ռիալ:**

**Հիշեցնենք նաեւ, որ ազգային բյուջեից «պարտքի անվան տակ» դարձյալ ՀՅԴ-ին ենթակա ՀՄ «Արարատ» կազմակերպության տարածքի համար վարձավճարի (նույն կուսակցության սխալի հետեւանքով) դիմաց վճարված երեք միլիարդ ռիալի մեծ մասը ու նաեւ «Ալիք» հաստատության նոր շենքի համար ազգային բյուջեից դուրս գրված 900 միլիոն ռիալը դեռ չեն վերադարձվել, եւ ընդհանրապես, հիշատակված չեն նաեւ նախահաշվում:**

**Իհարկե, այս շարանն արձանագրելուց նպատակ չունենք ասելու, որ Սրբազան հոր համար համայնքը շատ է վճարում, քավ լիցի, այլ պարզապես ուզում ենք հիշեցնել, ինչպես մեր իմաստուն պապերն են ասել՝ «ինչ ցանես, էն էլ կհնձես»...:**

# Զարաքոլուն Հայոց ցեղասպանության մասին նոր գիրք է հրատարակել

**Ստամբուլի «Բելգե» հրատարակչատունը, որի տնօրենը Հայոց ցեղասպանությունը ճանաչած թուրք մտավորական Ռագըփ Զարաքոլուն է, «Ինձ թաղեք առանց լողացնելու» վերտառությամբ Հայոց ցեղասպանության մասին պատմող նոր գիրք է հրատարակել: Գրքում ներկայացվում են Հայոց ցեղասպանության ականատեսների եւ նրանց հարազատների վկայությունները ու պատմությունները:Ռագըփ Զարաքոլուն գրքի շնորհանդեսի ժամանակ նշել է, որ ստեղծագործությունը կարեւոր աշխատություն է Թուրքիայի պաշտոնական շրջանակների այն պնդումների դեմ, որ, իբր, «հայերին քրդերն են կոտորել»:Զարաքոլուն հայտնել է, որ Հայոց ցեղասպանության մասին աշխատությունը հեղինակը գրել է 126 ականատեսների կամ նրանց հարազատների հետ ունեցած զրույցների հիման վրա:Գրքում ներկայացվում է 1915 թ-ի ցեղասպանության կենդանի վկաներից Մեհմեդ Էրսենի վկայությունը, որում նա պատմել է ցեղասպանության տարիներին Համիդիե գնդերում իր ծառայության ժամանակ տեսածների մասին: Նրա խոսքով՝ Հայոց ցեղասպանությունը ծրագրվել է Երիտթուրքերի կողմից, ովքեր քրդական ցեղերի առաջնորդ ներին համոզել են մասնակցել հայերի կոտորածներին:Ցեղասպանության մի այլ ականատես Մելլե Ալի Յըլդըզը պատմում է, որ իշխանությունների կողմից քրդաբնակ շրջաններ ուղարկված թուրք իմամները հատուկ հրովարտակներ էին արձակում այն մասին, որ եթե քուրդը 7 հայի սպանի, նրա առաջ կփակվի դժոխքի դուռը, իսկ եթե 8 հայի սպանի, նրա առաջ կբացվի դրախտի դուռը: Նրա խոսքով՝ 147 քուրդ հոգեւորականներ հայերին չկոտորելու համատեղ հրովարտակ են արձակել:զրույցում:**

**ԱՐՄԵՆՊՐԵՍ**

# Ճշտում

**Յարգելի խմբագրութիւն,**

**«Ազգի» 7 մայիսի առցանց թիւին մէջ կարդացի «Միջոցառումների շարք նվիրված Եղեռնի 100-ամեակին» վերտառութեամբ Լոնդոնի մէջ կատարուող ձեռնարկներու մասին ձեր տեղեկատուութիւնը, որոնց կազմակերպիչը ես եմ: Սրտագին շնորհակալութիւններս «Ազգի» խմբագրութեան, որ անդրադարձած է այնչափ կարեւոր այս ձեռնարկներու շարքին: Այսուհանդերձ, դժբախտաբար ձեր տեղեկատուութեան մէջ թոյլ տուած էք սխալ մը, որ թիւրիմացութեան տեղիք կու տայ:**

**Նշեալ ձեռնարկներուն գլխաւոր կազմակերպիչը՝ Լոնդոնի մէջ վերջերս իմ կողմէս հիմնադրուած Հայագիտական ուսմանց ծրագիրն է (Programme of Armenian Studies):**

**Ձեր տեղեկատուութիւնը նախ այն տպաւորութիւնը կը ձգէ, թէ՝**

**ա. «Դէպի 2015» ձեռնարկներու կազմակերպիչները «Հայաստանի բարեկամները» եւ «Կոմիտաս հիմնարկն» է: «Հայաստանի բարեկամները» համագործակցող կողմ է, բայց ոչ գլխաւոր կազմակերպիչ: Իսկ «Կոմիտաս հիմնարկը» մեր կողքին համակազմակերպիչն է միայն դոկտ. Ուղուր Ունկորի 9 մայիսի դասախօսութեան:**

**բ. Հայագիտական ուսմանց ծրագիրը «Կոմիտաս հիմնարկի» ենթակառոյցներէն մէկն է, ինչ որ ճիշդ չէ, այլ՝ անկախ կազմակերպութիւն մը, որուն գլխաւոր հովանաւորը «Կիլիկեան հիմնարկութիւն» է: Մենք պատիւը ունինք համագործակցելու տարբեր մարմիններու եւ կազմակերպութիւններու հետ, ընդ որում՝ «Կոմիտաս հիմնարկին»:**

**Ձեր լրատուութեան միջոցով սփիւռքի տարբեր անկիւնները հրաւիրու զօդող ձեր բարի դիտաւորութիւնը երբեք պիտի չուզէի հարցականի տակ դնել եւ թիւրիմացութեան մեղադրանքը մեր ուսերուն բարդել: Հաւանաբար ծանուցումի ձեւաւորումը եւ անուններու բանաձեւումը թիւրիմացութեան տեղիք տուած են: Շնորհակալ պիտի ըլլայի, եթէ տրուած թիւրիմացութիւնը «Ճշդումով» մը սրբագրէիք:**

**Այս առիթէն օգտուելով պիտի ուզէի հակիրճ կերպով ծանօթացնել Հայագիտական ուսմանց ծրագիրը, որուն գլխաւոր նպատակն է հայագիտական ուսումնական ծրագիրի մը պատրաստութիւնը, գործադրումը, ինչպէս նաեւ հայագիտութեան տարածումը Լոնդոնի համալսարանի ակադեմիք շրջանակներուն մէջ: Առայժմ արեւմտահայերէնի դասաւանդութեամբ կը զբաղինք: Արդէն ունինք երկու մակարդակներու վրայ դասարաններ՝ սկսնակ եւ միջնակարգ: Յաջորդ տարի պիտի բանանք նաեւ արեւմտահայերէնի յառաջացած դասարան: Այսպէս, տարուէ տարի ծրագիրը պիտի ընդարձակուի՝ ընդգրկելով հայ գրականութիւն, հայոց պատմութիւն, մշակոյթ եւ այլն:**

**Կանխայայտ շնորհակալութիւններս ձեզի:**

**Յարգանօք՝**

Դոկտ. ԳՐԻԳՈՐ ՄՈՍԿՈՖԵԱՆ
Հայագիտական ուսմանց ծրագիր

## Հաղթանակի օր

# Հայերս եւ մայիսի 9-ի խորհուրդը

*Մտորումներ Մեծ հաղթանակի օրվա առիթով*

Հայրենական մեծ պատերազմի ավարտից 68 տարի անց, երբ եզակի հայ վետերաններ են ողջ-առողջ, թվում է, թե աշխարհի ամենադաժան պատերազմում առաջադեմ ուժերի հաղթանակի այս օրը լոկ տուրք է քաղաքական հիշողություններին եւ իրողություններին, եւ գուցե կամաց-կամաց թեթեւացող պարտք՝ զոհվածների հիշատակին: Սակայն նույն քաղաքական իրողությունները գալիս են հաստատելու, որ չի մարելու Անհայտ զինվորի անմար կրակը, ժամանակի հետ չի մոռացվելու այդ պատերազմում հաղթածների փառքը եւ ժամանակի վայրիվերումներին վերջին 68 տարիներին ձեւավորված կուլ չի գնալու համաշխարհային կարգը: Այդ պատերազմում հաղթած դաշնակիցները ստեղծեցին Միավորված ազգերի կազմակերպությունը, սահմանեցին միջազգային իրավունքի հիմքերը եւ ազդարարեցին նոր աշխարհակարգ, որի ողջ անկատարությամբ հանդերձ, պտուղներից եւ առավելություններից են օգտվում մեր օրերի մարդիկ՝ աշխարհի բոլոր մայրցամաքներում: Հետպատերազմյան ամենադաժան տարիներին, երբ իրար դեմ հառնած երկու քաղաքական ճամբարները դեգերում էին «սառը պատերազմի» բավիղներում, 1975 թ. ԱՄՆ-ի եւ նախկին ԽՍՀՄ-ի նախաձեռնությամբ ձեւավորվեց Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության խորհուրդը, որը կոչված էր կանխելու ռազմական առճակատման վտանգը եւ անվտանգություն ապահովելու Եվրոպայում, որտեղից սկսվել էին երկու համաշխարհային պատերազմներ: Թվում է, թե այս գլոբալ դատողությունները շատ հեռու են մեզ՝ հայերիս հուզող ամենօրյա հոգսերից, եւ ներելի է մեր երիտասարդության անտարբերությունը, որը քիչ բան գիտե 2-րդ համաշխարհային պատերազմի, դրա հետեւանքների, էլ չասած մանրամասների մասին: Սակայն անանց է այդ պատերազմի հերոսների սխրանքը եւ չափազանց օգտակար Մեծ հաղթանակի մանրամասների խորհուրդները հասկանալը:



*Հայկական Թամանյան դիվիզիայի մի խումբ մարտիկներ եւ հրամանատարներ*

### Մնայուն եւ փոփոխական արժեքներ

Քսան տարի առաջ, երբ նոր էր փլուզվել նախկին ԽՍՀՄ-ը եւ հետխորհրդային հասարակությունները փորձում էին հասկանալ, թե ո՞րն է իրենց տեղը նոր միաբեւեռ աշխարհակարգում, սկսեցին վերանայվել եւ վերաիմաստավորվել շատ նախկին արժեքներ, որոնց թվում մազ էր մնում, որ հայտնվեր Մեծ հաղթանակի իրողությունը: Վերջին տասը տարում Ռուսաստանն անընդհատ զարգանում է եւ այսօր իրավամբ հավակնում է բազմակենտրոն աշխարհի լիարժեք բեւեռներից մեկը լինելու շատ պատասխանատու դերին: Ժամանակակից Ռուսաստանը, որը միջազգային ասպարեզում ԽՍՀՄ իրավահաջորդն է, փորձում է թույլ չտալ Երկրորդ աշխարհամարտի պատմության այնպիսի վերաձեւում եւ վերաշարադրում, որտեղ կարող է աղավաղվել ոչ միայն նախկին ԽՍՀՄ դերը Մեծ հաղթանակի ապահովման գործում, այլեւ նորովի «իմաստավորվել» բազմաթիվ ժողովուրդների ճակատագրերում այդ պատերազմի ունեցած դերը: Այստեղ կա երկու տեսակ մոտեցում. Խորհրդային Միության փլուզմամբ ավարտվեց այսպես կոչված սոցիալիզմի աշխարհի պատմությունը, որի գործնական հետեւանքներից մեկը Արեւելյան Եվրոպայի պետությունների անջատումն էր Խորհրդային Միության ազդեցության ոլորտից եւ մուտքը դեպի ազգերի եվրոպական ընտանիք: Մյուս գործնական հետեւանքը հետխորհրդային պետություններում 1939-1945 թթ. պատմության մութ էջերի լուսաբանումն էր, որտեղ իրական եւ արդարացված մանրամասների հետ մեջտեղ եկան բազմաթիվ պատմական փաստեր, որոնք ստվերում էին Հայրենական մեծ պատերազմում նախկին ԽՍՀՄ խաղացած դերի պատմական գնահատականը: Այդպես պատահեց բալթյան երկրներում, այդպես պատահեց նաեւ Արեւմտյան Ուկրաինայում: Սակայն 20 տարվա ընթացքում նորամուծությունների այս ալիքն էլ կարծես անցնելու վրա է, իսկ Ռուսաստանն էլ շարունակում է հզորանալ եւ հարստանալ, իր վրա բեւեռելով իր արեւելյան ու արեւմտյան հարեւանների ուշադրությունը, որոնք խորհրդամերժության այս քսանամյակում առանձնապես ոչինչ չշահեցին, իսկ հիմա համագործակցության հնարավորություններից փորձում են օգուտներ քաղել: Եթե ԽՍՀՄ պատմությունից հանում ենք գաղափարախոսական բաղադրիչը, ապա Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքների եւ հետեւանքների վերաիմաստավորման փորձերը հանգում են աշխարհաքաղաքական նոր իրողություններին հարմարեցվող նոր պատմություն ստեղծելու փորձերին: Եվ եթե իր պատմության առաջին տասնամյակում նոր Ռուսաստանը դեռ չգիտեր, թե ինչպես արձագանքել այդ նոր «վերաիմաստավորումներին», ապա այսօր Երկրորդ համաշխարհայինի պատմության կեղծարարությունը պաշտոնական Մոսկվան գնահատում է որպես սպառնալիք իր անվտանգությանը:

Իմ խոսքերում ոչ մի չափազանցություն չկա: Մեզ՝ հայերիս համար, այս դատողությունները բոլորովին հեռավոր կամ կողմնակի չեն: Դեռ «պերեստրոյկայի» տարիներին Հայաստանում սկսվել էր մի փնտրտուք, որի համաձայն Երկրորդ համաշխարհային պատերազմում մասնակցած հայերի թիվը հաշվարկվել էր ավելի քան 500 հազար, իսկ զոհերի թիվը հասնում էր 300 հազարի: Սկսել էին հաշվարկել հայ մասնակիցների ու զոհերի թվերը ոչ միայն նախկին Հայկական ԽՍՀ-ում, այլեւ նախկին Խորհրդային Միության մյուս հանրապետություններում եւ Եվրոպայի երկրներում ու ԱՄՆ-ում: Այն ժամանակ էր, երբ պարզվեց, որ պատերազմում հայերիս տված զոհերը չնչին չափով են զիջում ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի՝ նույն պատերազմում տված զոհերին: Զոհերի թվի ճշգրիտ անուն առ անուն վերահաշվարկն ընդհատվեց ԽՍՀՄ փլուզմամբ: Դեռ 30 տարի առաջ ընդունված էր ասել, որ Հայաստանում չկա ընտանիք, որը պատերազմում մասնակից չունենա: Այսօր այդ մասին խոսում են ավելի քիչ: Բայց քիչ չեն նրանք, ովքեր հիշում են, որ այդ պատերազմի տարիներին հայաստանցիներս առնվազն երկու անգամ զգացել ենք իրական ռազմական գործողությունների սկսման վտանգը: Առաջինը պատահել է 1943 թ. փետրվար-մարտին, երբ Ստալինգրադի ճակատամարտում խորհրդային զորքերի հաղթանակը կասեցրեց Թուրքիայի որոշումը՝ ներխուժել Անդրկովկաս: Երկրորդ անգամ նման վտանգ զգացին 1945 թ. մայիս-հունիսին, երբ արդեն խորհրդային զորքերը պատրաստվում էին պատերազմ սկսել Թուրքիայի դեմ: 92 տարի է, ինչ Հայաստանի Հանրապետության տարածքը չի կոխրծել թշնամու կոշիկը: 19 տարի է, ինչ Արցախը արժանապատվությամբ ապրել եւ հաղթել է մեր օրերի ծանր պատերազմում:





*Խորհրդային Միության կրկնակի հերոսներ Հովհաննես Բաղրամյան, Նելսոն Ստեփանյան*

### Հաղթանակ մարդատյացության դեմ

Ինչ էլ որ գրեն ստալինյան ամբողջատիրության, խորհրդային ժամանակների դաժանությունների մասին, կասկածից վեր է, որ խորհրդային մարդկանց անասելի դիմադրողականության, մարտական ոգու եւ մարտական եղբայրության շնորհիվ հնարավոր դարձավ հաղթել 20-րդ դարի մեծագույն չարիքին՝ ֆաշիզմին: Այսօր 68 ամյա այս եղելությունը մի նոր բնորոշում է ստանում աշխարհաքաղաքական նոր վերաձեւումների մեջ: Վերաբերմունքը մեծ հաղթանակի իրողությանը դառնում է վերաբերմունք Ռուսաստանի ու նրա ռազմաքաղաքական դաշնակիցների նկատմամբ: Երկրորդ աշխարհամարտում տարած հաղթանակի բերկրանքը ուժ է տալիս այսօրվա այն մարդկանց, ովքեր հավատարիմ են ռազմական դաշինքին ու մարտական եղբայրությանը ու շատ լավ են հասկանում, որ առանց նախկին Խորհրդային Միության ժողովուրդների միասնության ու համախմբվածության այդ հաղթանակին պարզապես հնարավոր չէր հասնել: Եվ ընդհակառակը. աշխարհաքաղաքական անցողիկ վայրիվերումներում այս պարզ ճշմարտությունների մեջ սեպ խրողների, այս ճշմարտությունները կասկածի տակ դնել փորձողների վրա հենվելու աշխարհաքաղաքական մրցակիցների փորձերը հերթական անգամ բումերանգի պես հետ են հարվածում, ինչպես դա եղավ Երկրորդ աշխարհամարտի ժամանակ: Այն ժամանակ էր, երբ Գերմանիային փորձեցին դրդել ԽՍՀՄ-ի դեմ, այլ ոչ թե ֆաշիզմը խեղդել իր բնօրրանում: Թե ինչով ավարտվեցին այդ ճարպիկ փորձերը, այսօրվա սերունդը գիտի դասագրքերից: Այս հաղթանակի անանց խորհուրդներից մեկն էլ այն է, որ չի կարելի թույլ տալ 68-ամյա վաղեմության պատմության մոռացությունը, որովհետեւ դրանից մի քայլ է դեպի այլատյացություն (սլավոնների, հրեաների եւ էլի մյուս ժողովուրդների դեմ), ատելություն բորբոքելու փորձեր: Եթե գաղափարախոսական իմաստով աշխարհը հաղթահարել է ամբողջատիրության եւ գլոբալ առճակատման հետեւանքները, ապա աշխարհաքաղաքական իմաստով բազմաբեւեռ աշխարհի նոր ձեւավորվող հիմնական բեւեռների միջեւ մրցակցությունը ընդունել է նոր ձեւեր՝ զուգակցելով մրցակցությունն ու համագործակցությունը: Գլոբալ մրցակցության ներքին բովանդակությունը մնացել է նույնը, բացառելով ատելությունը եւ իրարամերժությունը: Մենք՝ հայերս, որ գրված ենք աշխարհով մեկ, մեր այս վիճակի թուլությունը ուժի վերածելու ճիշտ ճանապարհին ենք: Ահա թե ինչու, օգտվելով Մեծ հաղթանակի ու նրան հաջորդած քաղաքական բառապաշարից, պետք է բարձրաձայնենք հայատյացության բորբոքման անմարդկային փորձերի դեմ, դա անելով հետպատերազմյան քաղաքական քաղաքակիրթ բառապաշարի զինանոցի ընձեռած բոլոր հնարավորություններով:

### Հիշել հանուն հայապահպանության

Արժեր, որ Ստալինգրադի ճակատամարտի 70-ամյակը Հայաստանում ավելի հնչեղ նշվեր: Լավ է, որ մայիսի 9-ին Արցախյան ազատամարտի հետ միասին մեր հարգանքի տուրքն ենք մատուցում Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակին ու ողջ վետերաններին: Ճակատագրի բերումով Շուշին ազատագրվել է մայիսի 9-ին: Մեր օրերի հերոս արցախցիներին ուժ է տվել նաեւ Երկրորդ աշխարհամարտի հայ զորավարների ու հերոսների փառքը: Արժե, որ մեր օրերի պատմաբանները վերստին անդրադառնան Երկրորդ աշխարհամարտի ռազմական ու քաղաքական պատմությանը, իմաստավորեն այն մեր ժողովրդի համար անանց նշանակություն ունեցող արժեքների դիրքերից: Այստեղ շատ բան կա գրելու եւ խորհրդային ժամանակներից՝ շատ կիսատ մնացած թեմաներ, որոնք կարոտ են անաչառ ուսումնասիրության եւ խնամքով շարադրանքի: Օրինակ՝ դեռ խորհրդային ժամանակներում շատ մտավորականներ համարձակորեն տարակուսում էին, թե ինչպես պատերազմում հաղթանակ տարած երկրի առաջնորդը անգթորեն դատապարտում եւ աքսորում էր ոչ իրենց մեղքով գերի ընկածներին: 50-60-ական թվականներին այդ անարդար դատավճիռների մեծ մասը վերանայվեց, իսկ մարդիկ արդարացվեցին: Մայիսի 9 երկու մեծ հաղթանակի օր լինելով, հայերիս մեջ կարող էր մեծ հանդուրժողականության եւ հասարակական մեծ համերաշխության օր նաեւ լինել: Այսօրվա Գերմանիան այսօրվա Ռուսաստանի գազի ամենամեծ գնորդներից մեկն է եւ ամենախոշոր ներդնողներից մեկը: Նացիզմի հետեւանքների հաղթահարումը հնարավոր է դարձրել նման մեծամասշտաբ համագործակցություն: Երկրորդ աշխարհամարտի ողբերգական էջերի վերհանումը պետք է որ թույլատրելի լինի, եթե վերանայման ենթական չէ ֆաշիզմի՝ որպես մարդկության մեծագույն չարիքի վերացման անհրաժեշտությունը: Բոլոր նրանք, ովքեր փորձում են այլատյացության, օտարատյացության, մարդատյացության համար հիմնավորումներ գտնել, պետք է հիշեն Երկրորդ աշխարհամարտի դասերը: Բոլոր նրանք, ովքեր կարծում են, որ այդ պատերազմի մանրամասների ու հաղթանակի խորհուրդը մոռացության տալով կարելի է հող նախապատրաստել նոր քաղաքական ու գաղափարախոսական հարձակումների համար, նույնպես պետք է հիշեն Երկրորդ աշխարհամարտի խորհուրդը: Հիշելով այդ պատերազմը, հասկանալով դրա հետեւանքների, արդյունքների ճանաչման անհրաժեշտությունը եւ համաշխարհային աշխարհակարգի հիմքերի աներերությունը, մենք հիմնավորում ենք մեր հավատարմությունը մեր ռազմաքաղաքական դաշնակիցներին, մեր մարտական եղբայրությանը, բարեկամներ ենք փնտրում աշխարհում եւ հաստատակամ ենք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության միջազգային ճանաչմանը, որի բարոյական ու քաղաքական հիմնավորումներն անթերի են հենց նույն ժամանակակից աշխարհակարգի (ասել կուզի՝ միջազգային իրավունքի) տեսանկյունից:

**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**
**Քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու**

# Քերրին բացառեց Ասադի մասնակցությունը Սիրիայի անցումային կառավարությանը

ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին մայիսի 9-ին Հռոմում վերահաստատել է իր երկրի դիրքորոշումը, ըստ որի նախագահ Բաշար Ասադը չպետք է մասնակցի Սիրիայում կազմավորվելիք անցումային կառավարությանը:

Քերրիի խոսքերով՝ մեծ տերությունները փորձում են մասնակից բոլոր կողմերի փոխհամաձայնությամբ Սիրիայում ձեւավորել անցումային կառավարություն, որին, ամերիկացիների կարծիքով, «նախագահ Ասադը չպետք է մասնակցի»:

Ֆրանսպրեսը հաղորդում է, որ Ջոն Քերրին այս հայտարարությունն արել է մամուլի համար՝ նախքան Հորդանանի արտգործնախարար Նասեր Ջուդեհի հետ հանդիպում ունենալը:

Պետքարտուղարը նաեւ հրապարակել է սիրիացի փախստականների համար ԱՄՆ-ի նախատեսած օգնության չափը: Նրա տվյալներով, կհատկացվի 100 մլն դոլար օգնություն: Այդ գումարի կեսը կտրվի Հորդանանին, որը դժվարությամբ է լուծում սիրիացի փախստականների զանգվածային ներհոսի հետ կապված խնդիրները:



BBC-ն հավելում է, որ Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեւիդ Կեմերոնը մայիսի 10-ին Սոչիում ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ քննարկելու է Սիրիայի իրադրության հարցը: Իր ուղեւորության նախօրեին Կեմերոնը Լոնդոնում հայտարարել է, թե բրիտանացիները «սահմանափակ, բայց համոզիչ տեղեկություններ ունեն, որ Բաշար Ասադի դաժան վարչակարգը կիրառել եւ կիրառում է քիմիական զենք, ներառյալ զարինը»:

# Սիրիային մատակարարվելու են ռուսական C-300 համակարգեր

Իսրայելի իշխանությունները լրջորեն մտահոգված են այն կապակցությամբ, որ Ռուսաստանը մտադիր է Սիրիային վաճառել C-300 զենիթահրթիռային համակարգեր, որոնք կարող են զգալիորեն ուժեղացնել սիրիացիների հակաօդային պաշտպանությունը: Իսրայելցիների մտահոգության մասին գրում են «Ուոլ Սթրիթ ջոռնըլ» եւ «Նյու Յորք թայմս» հեղինակավոր թերթերը:

«Ուոլ Սթրիթ ջոռնըլ»-ում Ջեյ Սոլոմոնի, Ադամ Էնտուսի եւ Ջուլիան Բըռնսի հրապարակած հոդվածում նշվում է, որ խոսքը Մոսկվայի եւ Դամասկոսի վաղեմի պայմանավորվածության մասին է, որին համապատասխան դեռ 2010 թվականին համաձայնություն էր ձեռք բերվել 900 մլն դոլարով C-300 համակարգերի 4 մարտկոցի վաճառքի շուրջը:




Առաջին մատակարարումները պետք է իրականացվեին համաձայնագրի ստորագրմանը հաջորդած 3 ամսվա ընթացքում եւ պետք է ավարտվեին մինչեւ 2013-ի վերջը, գրում է թերթը, վկայակոչելով իսրայելական աղբյուրներ: Նաեւ սպասվում է, որ Ռուսաստանը Սիրիա կգործուղի հրահանգիչների, որոնք սիրիացի զինծառայողներին կսովորեցնեն աշխատել C-300 զենիթային կայանքների հետ:

Հոդվածում նաեւ նշվում է, որ հրթիռային համակարգերի ռուսաստանցի մասնագետները ներկայումս Սիրիայում աշխատում են որպես հրահանգիչներ:

ՌԴ իշխանությունները առայժմ չեն մեկնաբանում ամերիկյան երկու թերթերի հրապարակումները: Խոսքը հակաօդային պաշտպանության համակարգերի, այսինքն պաշտպանական սպառազինությունների մասին է: Այդուհանդերձ, զինվորական փորձագետների գնահատումների համաձայն, սիրիացիներին C-300 համակարգի մատակարարումները կարող են տարածաշրջանում խախտել ուժերի հավասարակշռությունը:

Մի քանի տարի առաջ Մոսկվան մտադրվել էր C-300 համակարգեր մատակարարել Իրանին, սակայն Իսրայելին հաջողվել էր խափանել այդ գործարքը:

Որոշ վերլուծաբանների կարծիքով, Սիրիային C-300-ներ մատակարարելու Մոսկվայի մտադրությունը կարող է կտրուկ վատացնել Ռուսաստանի հարաբերությունները Իսրայելի եւ ԱՄՆ-ի հետ:

# Բեռլուսկոնիի նկատմամբ կայացված դատավճիռը հաստատվել է

Միլանի գանգատարկման դատարանը հաստատել է Իտալիայի նախկին վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնիի նկատմամբ ավելի վաղ կայացված դատավճիռը, որը նրան մեղավոր է ճանաչում իրեն պատկանող Mediaset ընկերության «ստվերային հաշիվների» գործով խարդախություն անելու մեջ:

Բեռլուսկոնին դեռ հնարավորություն ունի դիմելու վճռաբեկ դատարան: Բացի դրանից, նրա փաստաբանները կարող են հասնել այն բանին, որ դատավարությունները նորից անցկացվեն, նշում է Ռոյթեր գործակալությունը:



Mediaset-ի գործով առաջին դատավճիռը կայացվել էր 2012-ի հոկտեմբերին: Բեռլուսկոնիի լրատվական խումբը կինոֆիլմերի ցուցադրության իրավունքները ձեռք էր բերում ուրիշ ֆիրմաների, մասնավորապես Mediatrade-ի եւ RTI-ի միջոցով, ընդսմին անհամեմատ բարձրացնելով գնման գները: Իսկական եւ ուռճացված գների տարբերությունը փոխանցվում էր Շվեյցարիայի եւ Բահամյան կղզիների բանկային հաշիվներին, այդպիսով գոյացնելով «սեւ հիմնադրամներ»:

Դատարանի նյութերի համաձայն, Mediaset ընկերությունը հոլիվուդյան ֆիլմերի վարձույթի իրավունքները ձեռք էր բերում մտացածին օֆշորային ընկերությունների միջոցով, հայտարարագրերում խիստ ուռճացնելով գնման գները: Մեղադրող կողմի պնդման համաձայն, 11 ամբաստանյալներ արհեստականորեն բարձրացրել էին մոտ 3000 ֆիլմերի գները, յուրացնելով մոտ 250 մլն եվրո տարբերությունը: Այս մանրամասնությունը հաղորդում է BBC գործակալությունը:

2012 թ. դատավճռի համաձայն, Բեռլուսկոնին դատապարտվել էր 4 տարվա բանտարկության, սակայն ըստ համաներման դատարանը ժամկետը իջեցրել էր 12 ամսվա:

Սա Բեռլուսկոնիի նկատմամբ հարուցված առաջին քրեական գործը չէ: 2013-ի մարտին նրան մեկ տարվա բանտարկության էին դատապարտել իր քաղաքական մրցակիցների հեռախոսազրույցների անօրինական հրապարակման համար: Բացի դրանից, նրան կասկածում են կաշառակերության եւ մի անչափահաս պոռնկուհու հետ սեռական կապ ունենալու մեջ:

Բեռլուսկոնին Իտալիայի վարչապետի պաշտոնը զբաղեցրել է 1994-1995, 2001-2006 եւ 2008-2011 թվականներին: Ներկայումս նա «Ազատության ժողովուրդ» խորհրդարանական կուսակցության առաջնորդն է:

ԱԴՐԲԵՋԱՆԱ-ՎՐԱՑԱԿԱՆ

# Վրաստանի ադրբեջանցի նախարարը՝ Իվանիշվիլու որոնումների առարկա

**Ստալինյան ժամանակներում պաշտամունքը, պարտադրված ու համատարած, անհեթեթության բոլոր սահմաններն անցել էր: Մերօրյա նման անհեթեթության օրինակն էլ հարեւան երկրի նախկին նախագահի՝ Հեյդար Ալիեւի պաշտամունքն է, որ աշխարհով մեկ տեղադրված ու տեղադրվող արձաններից զատ ավելի ցցուն դրսեւորումներ էլ է ունենում: Ընդ որում, եթե Մեքսիկայում տեղադրում են Հեյդար Ալիեւի արձանը, հետո էլ մտափոխվում՝ չիմանալով ուր խցկել այդ «ստեղծագործությունը», մեր երկու հարեւանները պաշտամունքային սեղանին փոխադարձ ռեւերանսներով են հանդես գալիս:**

**Մայիսի 8-ին Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին, Ադրբեջանի նավթային պետական ընկերության նախագահ Ռովնագ Աբդուլաեւը եւ Ադրբեջանի մշակույթի ու զբոսաշրջության նախարար Աբուլֆաս Գարաեւը Վրաստանի Ռուսթավ քաղաքում Հեյդար Ալիեւի անվան պուրակ ու հուշարձան են բացել: Իվանիշվիլին ամենապրակտիկ դիրքերից հիշեցրել է, որ հենց Հեյդար Ալիեւի շնորհիվ է «ադրբեջանական նավթը հոսում Վրաստանի տարածքով»:**

**Դրան արդեն, ըստ վրացական լրատվամիջոցների, հետեւել է կենաց խոստովանություն, թե «Հեյդար Ալիեւն ադրբեջանական բաժինը զիջել է հօգուտ Վրաստանի, քանի որ բարձր էր գնահատում ադրբեջանցի եւ վրաց ժողովուրդների բարեկամությունը»: Սա էլ հուշարձան բացելու եթե ոչ պատճառը, ապա բացատրությունը...**

**Մնացյալը, ինչպես եւ ասվածը, վրաց նախկին ղեկավարների խոսքերից ոչ մի կերպ չի տարբերվում, թե Ադրբեջանը Վրաստանի ռազմավարական գործընկերն է: Երեւի դրա համար էլ Իվանիշվիլին իրադարձության առիթով Վրաստան այցելած ադրբեջանական լրատվամիջոցներին ասել է, թե նախարարի ադրբեջանցի թեկնածու է փնտրում:**

**«Խոստացել եմ, որ մեր հայրենակից ադրբեջանցին կզբաղեցնի վարչապետի խորհրդականի կամ օգնականի պաշտոնը, բայց որոշել ենք հեռուն գնալ եւ մեր ադրբեջանցիներից մեկին նախարար նշանակել», ադրբեջանական մամուլին հայտարարել է Իվանիշվիլին:**

**Բնավ էլ վատ մտադրություն չէ, այն էլ ոչ միայն Հեյդար Ալիեւի պատվին, այլեւ սեփական երկրի քաղաքացու, որպիսին Վրաստանում ապրող ադրբեջանցիներն են: Սակայն եթե հաշվի առնենք, որ մի հայ արդեն իսկ եղել է Վրաստանի նախագահի խորհրդական, եւ ադրբեջանցու պարագայում դժվար թե նախարարի աթոռին հայտնված մառնեուլցին իրեն հարմար տեղում զգա՝ առանց Վրաստանի նախագահի հայ խորհրդականի դերակատարությունը իրականացնելու:**

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

*Համո Մոսկոֆյանը հաղորդում է Իրաքյան Քուրդիստանից*

# Հարցազրույց տեղի հոգեւոր հովվի հետ

**- Տեր հայր, կարո՞ղ եք ներկայանալ «Ազգի» ընթերցողներին:**

- Մասիս քահանա Շահինյան, ծնվել եմ Մոսուլում, Իրաքյան Քուրդիստանի Դհոկ քաղաքի եւ հայաշատ Հավրեզ, Ավզրուկ, Զախո եւ Էրբիլի ավանների եւ քաղաքի հոգեւոր հովիվն եմ: Այս շրջանների հայերը բացարձակ մեծամասնությամբ Հայոց ցեղասպանության վերապրողների զավակներն ու թոռներն են:

**- Այստեղի հայ համայնքը ի՞նչ հարաբերությունների մեջ է քրդական իշխանությունների հետ:**

- Քրդերը առայժմ ստեղծում եւ զարգացնում են իրենց պետությունը: Նրանք շատ լավ հարաբերությունների մեջ են բոլոր քրիստոնյաների, մանավանդ հայերի հետ, որոնք բարի համբավ ունեն Քուրդիստանում: Հայերից շատերը բարձր պաշտոններ են զբաղեցնում պետության բազմաթիվ ոլորտներում: Քուրդ պաշտոնյաները օգնում են մեզ: Որպես օրինակ՝ Դհոկի քուրդ քաղաքապետը հայ ժողովրդի հարգարժան զավակ Սարգիս Աղաջանի միջնորդությամբ կառուցել տվեց Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու տակ գտնվող Սուրբ Ներսես Շնորհալի հոյակապ եկեղեցին իր համալիրով: Այժմ չորս տարի է, ինչ մենք բոլոր արարողությունները, հանդիսությունները, հանդիպումները կազմակերպում ենք այստեղ եւ կողքին 1000 քմ տարածքում գործող «Արարատ» հարսանյաց սրահում:

Այսօր Դհոկում ապրում է 64 հայ ընտանիք (250 անձ): Դժբախտաբար, մեր նոր «ինտերնետային» սերունդը չի ցանկանում բազմանդամ ընտանիքներ կազմել: Հավրեզում 85 ընտանիք է ապրում, Ավզրուկ գյուղում կան 70 հայ ընտանիքներ, Զախոյում 150 տուն հայեր, իսկ Էրբիլում 120 ընտանիք իրաքահայեր են ապրում եւ բարգավաճում: Սուլեյմանիայում էլ կան 15 ընտանիքներ: Շինգալ-Անջալում գոյություն ունեն շուրջ 16 հայ ընտանիքներ:

Ցանկանում եմ հիշել մեր գաղթօջախի պանծալի զավակ Սարգիս Աղաջանին (մեծ մոր կողմից հայ), որ Իրաքյան Քուրդիստանի փոխվարչապետ եւ էկոնոմիկայի նախարար էր եղել, մեծապես օգնել է ինչպես հայերին, այնպես էլ մյուս քրիստոնյաներին եւ այլ դավանանքի համայնքներին՝ կառուցելով տներ ու բնակավայրեր, նաեւ, ինչպես ասվեց, Դհոկի Սուրբ Ներսես Շնորհալի հոյակերտ եկեղեցին, որն օծվեց իրաքահայոց հոգեւոր առաջնորդ Ավագ սրբազանի ձեռամբ:

Մինչեւ այսօր, Բաղդադից, Բասրայից եւ այլ շրջաններից Քուրդիստանի ապահով շրջաններ ապաստան գտած փախստականներ ամսավճարներ են ստանում Սարգիս Աղաջանից, ներառյալ բոլոր հոգեւորականները:

**- Ի՞նչ է Ձեր պատգամը հայությանը:**

- Մենք՝ որպես հայեր, ապրում ենք հայրենիքում թե Սփյուռքում, մի ճակատագիր ունենք: Պետք է թիկունք լինենք իրարու, մեր պատմական առաքելությունը շարունակելու համար:

ԼՈՒՐԵՐ

# «Գրաֆիկա եւ քանդակ» հանրապետական ցուցահանդեսը



Հայաստանի նկարիչների միությունում օրերս բացվեց գրաֆիկայի հանրապետական ցուցահանդեսը:

Բացման ու ողջույնի խոսքով հանդես եկավ նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանն,ով շնորհավորեց բոլոր վետերաններին հաղթանակի տոնի ու Շուշիի ազատագրման կապակցությամբ՝ նշելով, որ սա հերթական ցուցահանդեսն է ու որ նմանատիպ ձեռնարկները կլինեն շարունակելի եւ կնպաստեն մեր երկրի տաղանդավոր ու երիտասարդ արվեստագետների կայացմանը, իսկ վերջում հայտարարեց, որ շուտով լինելու է ցուցահանդեսի քննարկումը բոլոր մասնակից քանդակագործների ու նկարիչների հետ:

Այնուհետեւ խոսեց ճանաչված քանդակագործ Լեւոն Կոջոյանը, որ մեջբերումներ կատարեց նկարիչ Հակոբ Կոջոյանից, մասնավորապես պետք է տքնաջան աշխատել, չբավարարվել իմացած գիտելիքներով ու ստեղծած աշխատանքներով,ավելի վառ պահելով մեր մեծանուն արվեստագետների թողած ավանդն ու կերտած մշակույթը:

Վերջում խոսեց գրաֆիկայի մասնագետ Սամվել Կարապետյանը, որ ղեկավարում է գրաֆիկայի ամբիոնը: Նա նշեց, որ այս աշխատանքները եւս կընդգրկվեն ալբոմի մեջ:

Ցուցահանդեսում հիմնականում ներկայացված էին Նկարիչների միության անդամների, երիտասարդ ստեղծագործողների աշխատանքները:

ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

*Լուսանկարը՝ Արման Երիցյանի*

# Քարդաշ Օննիկի նոր գիրքը՝ «Լեռան Ոգին»

Գլենդեյլում գործող «Ապրիլ» գրախանութում մայիսի 4-ին տեղի է ունեցել նյույորքաբնակ քանդակագործ, մանկավարժ, գրող եւ հասարակական գործիչ Քարդաշ Օննիկի «Լեռան ոգին» հատորի շնորհանդեսը, տեղեկացնում է «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթը: Հատորը բաղկացած է 2 գրքերից՝ մեկը արեւմտահայերենով, մյուսը՝ արեւելահայերենով գրված: Անգլերեն բնագրից հատորը թարգմանել են Իշխան Ճինբաշյանն ու Շուշան Մանուկյանը:

«Ցանկացա, որ բոլորին էլ մատչելի լինի հատորը», ասել է Օննիկը:

Նա ծնվել է Զահլեում (Լիբանան) 1941-ին եւ 1958-ի եղբայրասպան կռիվներից փախչելով հաստատվել է Նյու Յորքում:

«Լեռան ոգին» տարածաշրջանային իրադարձությունների ժամանակագրական պատմություն է, շաղախված արվեստի, հոգեւորի եւ միջմշակութային երկխոսության խորհրդածություններով:

Շնորհանդեսի ավարտին տեղի է ունեցել հարց ու պատասխանի բաժին, որից հետո հեղինակը ստորագրել է իր գրքերը:

Հ. Ծ.

# «Արշակ արքա. Դրաստամատ ներքինի» պատմավեպի երրորդ հրատարակությունը

«Անտարես» հրատարակչությունը «Պարտադիր ընթերցանություն մատենաշարով» լույս է ընծայել Լեւոն Խեչոյանի «Արշակ արքա. Դրաստամատ ներքինի» պատմավեպը, որը 4-րդ դարի պատմական իրադարձությունների հենքով յուրովի մեկնաբանում է նորագույն ժամանակների անկախ հայկական պետականության կայացման դժվարությունները: Այդ առումով վեպը նաեւ մեր ժամանակների մասին է՝ հասարակական, քաղաքական ու սոցիալական հարցերի առարկայական ճանաչելիությամբ, տեղեկանում ենք հրատարակության ուղարկած հաղորդագրությունից եւ նաեւ այն մասին, որ վեպի վերջին՝ երրորդ հրատարակության մեջ ուղղվել են նախորդ երկու (1995, 2002) հրատարակություններում սպրդած բոլոր վրիպակները:




Մ. Բ.

# «Անմահները»

## *պատմագրական աշխատանքների պատկերազարդ ժողովածու*

Ամերիկայի Հայկական գրադարան-թանգարանը (ALMA), Հայ կանանց միջազգային ասոցիացիան (AIWA), եւ Հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիան (NAASR) համատեղ ջանքերով մայիսի 12-ին կազմակերպել են միջոցառում, որի ընթացքում գրող Ալիս Նավասարգյանը կներկայացնի իր նորագույն «Անմահները: Պատմագրական աշխատանքների պատկերազարդ ժողովածու» հատորը (The Immortals: A Pictorial Anthology of Historiographic Works): Միջոցառումը տեղի կունենա Ամերիկայի հայկական գրադարան-թանգարանում: Տիկին Նավասարգյանը կներկայացնի հայկական պատմության նշանավոր դեպքերի եւ դեմքերի մասին պատմող իր հատորը, որն իր նախորդ երկու «Ոսկե կամուրջներ: Իրան-Հայաստան» (1997) եւ «Բեմի հայ կանայք» (1999) գրքերի նման կուռ կառուցվածք ունի:

Ալիսը ծնվել է Թավրիզում (Իրան), Մինասյանների ընտանիքում: Պատմություն եւ հայագիտություն մասնագիտությամբ ավարտել է Սպահանի համալսարանը:

Հ. Ծ.

# Սոֆյա Միխայելյան. «Կյանքը՝ պոլիֆոնիա է»

Սոֆյա Միխայելյանը ծնվել է Գյումրիում 1965թ. օգոստոսի 27-ին: 1989թ. ավարտել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրային ֆակուլտետը (պրոֆեսոր՝ Ռոբերտ Շուգարովի դասարան), իսկ 1993թ.՝ ասպիրանտուրան «Կոնցերտմայստերական վարպետություն» մասնագիտությամբ (պրոֆ.՝ Ադա Հակոբյանի դասարան), 2005թ՝ ստեղծագործական ֆակուլտետը (պրոֆ.՝ Միխայիլ Կոկժաեւի դասարան): 1989թ-ից դասավանդում է Հայաստանի տարբեր քաղաքների երաժշտական ուսումնարաններում եւ դպրոցներում: 1995թ-ից աշխատել է ԵՊԿ մասնագիտական դաշնամուրի ամբիոնում՝ որպես ասիստենտ (պրոֆեսորներ՝ Ռոբերտ Շուգարովի, այնուհետեւ՝ Ալեքսանդր Գուրգենովի դասարաններում): 2002թ-ից մասնագիտական դաշնամուրի ամբիոնի դասախոս է: 2009թ-ից ՀՀ կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության անդամ է, իսկ 2010թ ստացել է դոցենտի կոչում: Հանրապետական եւ միջազգային մրցույթների դափնեկիր է: Կոմպոզիտորը ստեղծագործում է տարբեր ժանրերում՝ սիմֆոնիկ, կամերային նվագախմբային, վոկալ-գործիքային-երգչախմբային, կամերային-անսամբլային, վոկալ, խմբերգային: Նրա ստեղծագործություններից են՝ «Ի խորոց սրտի» ըստ Սրբ. Գր. Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի՝ սոպրանոյի, ասմունքողի, երկսեռ երգչախմբի եւ սիմֆոնիկ նվագախմբի համար (դիպլոմային աշխատանք), «Պոլիֆոնիկ սյուիտ» դաշնամուրային ցիկլ, «Արտացոլում երեք հայելիներում» ֆլեյտայի, ջութակի եւ դաշնամուրի համար, «Օրհներգ մայրության» եւ «Քայլերգ Հայոց բանակին» փողային նվագախմբի համար: Վերջինս մեծ գնահատանքի է արժանացել ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր՝ Էդվարդ Միրզոյանի կողմից. «Ս. Միխայելյանի փողային քայլերգը այս ժանրում վերջին տարիների լավագույն ստեղծագործություններից մեկն է», իսկ ՀՀ ժողովրդական արտիստ՝ Ռուբեն Ալթունյանի բնորոշմամբ. «Այն առանձնանում է իր ավարտուն կառուցվածքով, ազգային հնչերանգով, պահպանված է ավանդական, փողային նվագախմբին հատուկ ներդաշնակ գործիքավորումը»:



Կոմպոզիտորի ստեղծագործություններից մեր ուշադրությունը գրավել է մասնավորապես կվարտետը ֆլեյտայի, դափի, ուդի եւ դաշնամուրի համար, որն աչքի է ընկնում ազգային երանգով եւ խորհրդավոր զսպվածությամբ: Այս ստեղծագործության մասին երաժշտագետ Մարգարիտ Ռուխկյանը նշում է. «Ժողովրդական գործիքները՝ զետեղված դասական կառուցվածքների մեջ, ակտուալ են, հետաքրքրական եւ վերջապես նորաձեւ, բայց հասկանալի համակրանք է առաջացնում, որ կոմպոզիտորը գործիքների հետ վարվում է նրբորեն եւ զգույշ»:

Նշենք նաեւ, որ վերջերս թողարկվեց դաշնակահար Հայկ Մելիքյանի առաջին ձայնասկավառակը՝ 1900+ նախագծի շրջանակներում, որտեղ ընդգրկված հայ երիտասարդ մի շարք կոմպոզիտորների ստեղծագործությունների թվում էր նաեւ Ս. Միխայելյանի «Երեք ֆանտաստիկ պիեսներ»-ը դաշնամուրի համար (1985թ./2012թ./1997թ.), որը կոմպոզիտորը գրել է իր ստեղծագործական ուղու տարբեր ժամանակահատվածներում: Կոմպոզիտոր, դաշնակահար՝ Հայկ Մելիքյանն այս ստեղծագործության կապակցությամբ նշել է. «Չնայած շարքի, բոլոր պիեսները գրվել են կոմպոզիտորի ստեղծագործական ուղու տարբեր ժամանակահատվածներում, այնուամենայնիվ, դրանք իրենց ավարտուն տեսքը ստացան 2012 թվականին, եւ ունեն մեկ ընդհանուր գաղափար, որի հիմքում «անհասկանալիի», «հանելուկայինի», գուցե նաեւ «խառնաշփոթի» եւ «հարցերի շարանի» մտատանջող կծիկն է: Դրանք բախվում են հարակից հեգնանքին, հաճախ նաեւ ջինջ ու պարզունակ մեղեդուն: Լինելով նաեւ դաշնակահար, կոմպոզիտորը հմտորեն է վերաբերվում գործիքի կատարողականությանը, պիեսներում ցուցադրելով ինչպես վիրտուոզ, այնպես էլ քնարական չափաբաժիններ: Ստեղծագործության պրեմիերան կատարեցի Իտալիայում, Հռոմում անցկացվող «Nuovi Spazi Musicali» ժամանակակից երաժշտության փառատոնի շրջանակներում ընթացող իմ մենահամերգի ժամանակ, 2012թ. հոկտեմբերին»:

Ս. Միխայելյանի ստեղծագործություններից պակաս հետաքրքրական չեն նաեւ խմբերգերը՝ «Այսօր գոլով ի Բեթանիա» կանանց երգչախմբի համար a cappella (հիմքում Սահակ Պարթեւի շարականն է «Ղազարու հարութեան» կանոնից), որը կոմպոզիտորը գրել է 2001թ.՝ նվիրված Հայաստանում Քրիստոնեության ընդունման 1700-ամյակին, «К вам я пришел, о деревя, цветы» (խոսք՝ Սարմենի, ռուսերեն թարգմանությունը՝ Ն. Գորոխովի, կանանց կամ մանկական երգչախմբի համար, դաշնամուրի նվագակցությամբ), որը նվիրել է դաշնակահար, մանկավարժ, ԵՊԿ պրոֆ.՝ Ա. Գուրգենովի հիշատակին, «Խնոցի» (խոսք՝ Հ. Թումանյանի) մանկական երգչախմբի համար, a cappella: Նշենք, որ խմբերգի ժանրը սկսել է առավել հետաքրքրել կոմպոզիտորին, պատահական չէ, որ նա 2012թ.-ից երգում է «Փարոս» կամերային երգչախմբում:

Ս. Միխայելյանի ստեղծագործությունները, որոնք կատարվում են ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում, բազմազան են իրենց թեմատիկայով: Դիմելով տարբեր ժանրերի կոմպոզիտորը փորձել է զգալ, գտնել իրենը, հաստատվել դրանում եւ գնալ առաջ: Նա նաեւ հրաշալի դաշնակահար է, որն իր գիտելիքներն ու փորձն է փոխանցում ուսանողներին: Կոմպոզիտոր՝ Մ. Կոկժաեւը հետեւյալ կերպ է արտահայտվել Միխայելյանի մասին. «Ս. Միխայելյանը փայլուն դաշնակահար է, երաժշտականությամբ օժտված անձնավորություն, աշխատասեր, նա արագ սկսեց առաջ գնալ: Ընդհանուր առմամբ հեռանկարային կոմպոզիտոր է, շատ ամուր պրոֆեսիոնալ: Կան բազմաթիվ կին կոմպոզիտորներ, որոնք ուսումն ավարտելուց հետո հրաժարվեցին զբաղվել կոմպոզիցիայով, կամ սկսեցին աշխատել ավելի թեթեւ ժանրերի մեջ: Ես հուսով եւ վստահ եմ, որ Սոֆյան կշարունակի իր ստեղծագործական պրոցեսը»:

Կոմպոզիտորն ապրելով եւ ստեղծագործելով իր «կյանքի պոլիֆոնիայում», հավատում է երաժշտության եւ մարդու միջեւ բացառիկ ու անբաժանելի կապին. «Երաժշտությունը իմ հավատարիմ եւ անփոխարինելի ընկերն է, որին վստահում եմ հոգուս գաղտնիքները», ասում է նա:

ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ

ՀՀԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ, երաժշտագետ, կոմպոզիտոր

# Հայաստան-Թուրքիա կինոպլատֆորմի սեմինար Երեւանում

Հուլիսի 8-10-ը Երեւանում կայանալիք «Ոսկե ծիրան» 10-րդ միջազգային կինոփառատոնի շրջանակներում նախատեսվում է անցկացնել Հայաստան-Թուրքիա կինոպլատֆորմը զարգացնելու ծրագիր-աշխատանքային սեմինար: Ծրագիրը ֆինանսավորում է Եվրոմիությունը: Directors Asross Borders ծրագիրը կոչ է անում բոլոր հետաքրքրված երկրների ռեժիսորներին ակտիվորեն մասնակցել սեմինարին: Ընտրվելու է 10 ծրագիր, որոնցից ամենալավը արժանանալու է ժյուրիի 10 հազար ամերիկյան դոլար մրցանակին:

Մասնակցության դիմումները պետք է ներկայացվեն մինչեւ մայիսի 31-ը: Դիմումի համար անհրաժեշտ է լրացնել «www.dabhub.com»-ի «ONLINE SUBMISSION FROM» ձեւը:

Հայաստան-Թուրքիա կինոպլատֆորմը սկսել է գործել 2008 թվից, մասնակցությամբ «Ոսկե ծիրան» կինոփառատոնի (Հայաստան) եւ «Անատոլու կուլտուրի» (Թուրքիա):

Հ. Ծ.

# Մարզական

## Հայ շախմատիստներից 6-ն առաջատարների հետապնդողների թվում են

Լեհաստանի Լեգնիցա քաղաքում շարունակվող շախմատի Եվրոպայի անհատական առաջնությունում հայ շախմատիստներից լավագույն արդյունքն ունեն Սերգեյ Մովսիսյանը, Գաբրիել Սարգսյանը, Տիգրան Պետրոսյանը, Հրանտ Մելքումյանը, Զավեն Անդրեասյանն ու Ռոբերտ Հովհաննիսյանը, որոնք վաստակել են 3-ական միավոր:



Մովսիսյանը, Պետրոսյանը եւ Մելքումյանը հաղթեցին համապատասխանաբար Նիլս Գրանդելիուսին, Յարոսլավ Պրիզանտին ու Մաթիաս Բլուեբաումին: Սարգսյանն ու Հովհաննիսյանն էլ հաշտություն կնքեցին համապատասխանաբար Սանան Սյուգիրովի եւ Ֆրանցիսկո Վալյեխոյի հետ:

Մրցաշարային աղյուսակը 4 միավորով գլխավորում է Ալեքսանդր Մոիսեենկոն, որը պարտության մատնեց Սերգեյ Վոլկովին: 12 շախմատիստ վաստակել է 3,5-ական միավոր:

Վլադիմիր Հակոբյանը, Արման Փաշիկյանը, Կարեն Գրիգորյանը եւ Հովհաննես Գաբուզյանը վաստակել են 2,5-ական միավոր: Հակոբյանը ոչ-ոքի խաղաց Անտոն Շոմոեւի հետ, Փաշիկյանը միավորը կիսեց Կժիժտոֆ Դուդայի հետ պարտիայում, իսկ Գրիգորյանն ու Գաբուզյանը հաղթանակներ տոնեցին համապատասխանաբար Դավիթ Կանովսկու եւ Արիան Տարիի նկատմամբ:

Տուրն անհաջող էր Ավետիք Գրիգորյանի, Ռոբերտ Աղասարյանի եւ Վլադիմիր Պողոսյանի համար, որոնք պարտվեցին: Էլինա Դանիելյանը հաշտություն կնքելով Վլադիմիր Մինկոյի հետ, վաստակեց 1,5 միավոր:

## ՀՀ հավաքականը պահպանել է 90-րդ հորիզոնականը

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը պահպանել է 90-րդ հորիզոնականը ՖԻՖԱ-ի դասակարգման նոր ցուցակում: Մեր ընտրանին ունի 421 միավոր: Աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում Հայաստանի հավաքականի առաջիկա մրցակից Մալթայի ընտրանին, որի հետ մեր ֆուտբոլիստները Երեւանում կմրցեն հունիսի 7-ին, դասակարգման ցուցակում մեկ հորիզոնականով առաջադիմել ու հանգրվանել է 156-րդ տեղում: Իսկ Դանիայի հավաքականը, որի հետ ընտրական մրցախաղը կայանալու է հունիսի 11-ին, պահպանել է տեղը 20-րդ հորիզոնականում:

Անփոփոխ է մնացել լավագույն տասնյակը: Ցուցակը գլխավորում են աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն իսպանացիները: 2-րդ եւ 3-րդ հորիզոնականները զբաղեցնում են Գերմանիայի ու Արգենտինայի հավաքականները, որոնց հաջորդում են Խորվաթիան, Պորտուգալիան, Կոլումբիան, Անգլիան, Իտալիան, Հոլանդիան եւ Էկվադորը:

Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հավաքականներից լավագույնը Ռուսաստանն է, որը պահպանել է 11-րդ հորիզոնականը: 2-րդ արդյունքն ունի Ուկրաինան, որը 37-րդ տեղում է: Մյուս հավաքականների ցուցանիշներն այսպիսին են. 66. Ուզբեկստան, 69. Բելառուս, 92. Էստոնիա, 96. Վրաստան, 110. Լատվիա, 111. Լիտվա, 112. Տաջիկստան, 120. Ադրբեջան, 133. Թուրքմենստան, 139. Մոլդովա, 143. Ղրղզստան, 144. Ղազախստան:

## «Շախտյորը» կրկին գավաթի եզրափակիչում է

Ուկրաինայի գործող գավաթակիր, պատվավոր մրցանակի 8-ակի դափնեկիր Դոնեցկի «Շախտյորը» հյուրընկալվելիս 4-2 հաշվով հաղթելով «Սեւաստոպոլին», կրկին իրավունք ստացավ հանդես գալու եզրափակիչում: Թիմի կազմում 2 գոլ խփեց «Շախտյորի» ռմբարկու Հենրիխ Մխիթարյանը:

Ուկրաինայի գավաթի եզրափակիչ հանդիպումը կկայանա մայիսի 22-ին Խարկովի «Մետալիստ» մարզադաշտում: Այդ օրը «Շախտյորը» գավաթը կվիճարկի Օդեսայի «Չեռնոմորեցի» հետ, որը կիսաեզրափակիչում 2-1 հաշվով կամային հաղթանակ տոնեց Դնեպրոպետրովսկի «Դնեպրի» նկատմամբ:

## Իբրահիմովիչը մտադիր է հեռանալ ՊՍԺ-ից



Ֆրանսիական ՊՍԺ-ն հավանաբար զրկվի իր գլխավոր «աստղից»՝ Զլատան Իբրահիմովիչից: Վերջինս հայտարարել է, որ մրցաշրջանի ավարտից հետո մտադիր է հեռանալ թիմից: Այդ հայտարարությունն անակնկալ էր ակումբի ղեկավարության համար:

Իբրահիմովիչը ՊՍԺ էր տեղափոխվել անցյալ տարվա ամռանը՝ 3 տարվա պայմանագիր կնքելով ակումբի հետ: Նրա տարեկան աշխատավարձը 14,5 մլն եվրո է: Թվում էր, թե պայմանները բավարարում են Իբրահիմովիչին:

Թիմից հեռանալու պատճառներից մեկը Ֆրանսիայի առաջնության ոչ այնքան բարձր մակարդակն է, որ չի գոհացնում շվեդ ֆուտբոլիստին: Բացի այդ, նրա ընտանիքն էլ ցանկանում է հեռանալ Ֆրանսիայից:

Հավանաբար Իբրահիմովիչը կրկին վերադառնա Իտալիա: Նրանով հետաքրքրվում է «Յուվենտուսը», որի կազմում շվեդ ֆուտբոլիստը հանդես է եկել 2004-2006-ին: Ըստ ոչ պաշտոնական տեղեկությունների, «Յուվենտուսն» Իբրահիմովիչին պատրաստ է տարեկան 7 մլն եվրո վճարել: Ստացվում է, որ Իբրահիմովիչի աշխատավարձը ՊՍԺ-ի համեմատ կրկնակի կնվազի: Բոլորովին վերջերս «Յուվենտուսի» նախագահ Ջոն Էլկանը հայտարարել է, որ թիմին «աստղեր» հարկավոր չեն: Այդ դեպքում Իբրահիմովիչը գուցե օգտակար կլինի Ժոզե Մոուրինյուին, որը պատրաստ է գլխավորել «Չելսին»: Սակայն վերջինս սկսել է թիմի կազմի երիտասարդացման գործընթացը, իսկ շվեդ հարձակվողն արդեն 31 տարեկան է: Չի բացառվում, որ Իբրահիմովիչը հայտնվի «Մանչեսթր Սիթիում»:

## Գրիգոր-Սեւակ Մխիթարյանի առաջին հաղթանակը

Բոլիվիայում ընթացող շախմատի ամերիկյան մայրցամաքի առաջնության 2-րդ տուրում Գրիգոր-Սեւակ Մխիթարյանն առաջին հաղթանակը տոնեց Խոսե Ֆլորեսի հետ պարտիայում: Մխիթարյանը 1,5 միավորով 26-րդ տեղում է: 2-ական միավորով աղյուսակը գլխավորում են 23 շախմատիստներ:

### ՇԱԽՄԱՏ

## Լեւոն Արոնյանն անդրանիկ հաղթանակը տոնեց

Նորվեգիայում ընթացող շախմատի մրցաշարի 2-րդ տուրում Լեւոն Արոնյանը սպիտակներով մրցում էր առաջատարներից մեկի՝ Հիկարու Նակամուրայի հետ: Երկարատեւ պայքարից հետո Արոնյանը 70-րդ քայլին հաղթանակ տարավ ու վաստակելով 1,5 միավոր, հանգրվանեց 2-րդ տեղում:

Սերգեյ Կարյակինը հաղթելով Յոն Լյուդվիգ Համերին, 2 միավորով գլխավորեց աղյուսակը: Վան Հաոն պարտության մատնեց մյուս առաջատարին՝ Պյոտր Սվիդլերին, որն ունի մեկ միավոր:

Տուրի կենտրոնական պարտիան աշխարհի առաջնության եզրափակիչ առաջիկա մրցախաղի մասնակիցներ Մագնուս Կառլսենի եւ Վիշվանաթան Անանդի մրցավեճն էր: 59-րդ քայլին մրցակիցները խաղաղ դաշն կնքեցին: Առաջին կես միավորը վաստակեց Թեյմուր Ռաջաբովը, որը հաշտություն կնքեց Վեսելին Տոփալովի հետ:

Այսօր կկայանան մրցաշարի 3-րդ տուրի հանդիպումները: Լեւոն Արոնյանը սեւերով կխաղա Պյոտր Սվիդլերի հետ:

## Անի Սարգսյանը ցույց տվեց 4-րդ արդյունքը

Պերուի մայրաքաղաք Լիմայում ընթացող ծանրամարտի աշխարհի երիտասարդական առաջնության հերթական օրը մինչեւ 69 կգ քաշային կանանց մրցումներին մասնակցեց Ռուսաստանը ներկայացնող Անի Սարգսյանը: Նա երկամարտի 209 կգ (90+119) արդյունքով 9 մասնակիցների մեջ գրավեց 4-րդ տեղը:

Անին պոկում վարժության 2 մոտեցումները հաջող կատարեց՝ 90 կգ արդյունքով գրավելով 5-րդ տեղը: Նա ավելի հաջող ելույթ ունեցավ հրում վարժությունում՝ 119 կգ-ով զբաղեցնելով 4-րդ հորիզոնականը:

Հայ մարզուհին ի վիճակի չէր խառնվելու մեդալների համար մղվող պայքարին: Երկամարտի 245 կգ (115+130) արդյունքով աշխարհի չեմպիոնուհի հռչակվեց չինացի Քայինուե Վանգը: Արծաթե մեդալը նվաճեց ղազախուհի Ժազիրա Ժապարկուլը, որը երկամարտում ցույց տվեց 240 կգ (105+135) արդյունք: Բրոնզե մրցանակակիր դարձավ թունիսցի Գհադա Հասինը՝ 222 կգ (101+121):

## Լավագույնն Արթուր Ալեքսանյանն է

Եվրոպայի կրկնակի չեմպիոն Արթուր Ալեքսանյանը գլխավորում է մինչեւ 96 կգ քաշային հունահռոմեական ոճի ըմբիշների դասակարգման ցուցակը, որը հրապարակել է ՖԻԼԱ-ն:

Մինչեւ 84 կգ քաշայինների դասակարգման ցուցակի լավագույն հնգյակն է եզրափակում Եվրոպայի առաջնությունների կրկնակի բրոնզե մեդալակիր Արթուր Շահինյանը:

Վարկանիշային աղյուսակը կազմվել է Լոնդոնի օլիմպիադայից հետո կայացած մրցաշարերի արդյունքների հիման վրա:

## Բասկետբոլիստները սկսեցին մրցավեճը

Մեկնարկել են բասկետբոլի Հայաստանի կանանց եւ տղամարդկանց առաջնությունները: Տղամարդկանց մրցաշարին մասնակցում են 6 թիմեր, որոնց մասնակցությամբ հանդիպումները տեղի են ունեցել Գյումրիում եւ Արթիկում: Գյումրիում գրանցվել են այսպիսի արդյունքներ. «Ինժեներ»-«Գրանդ Սպորտ»՝ 91-105, «Ինժեներ»-«Գյումրի»՝ 82-69, «Գրանդ Սպորտ»-«Գյումրի»՝ 91-57:

Հաջող է մեկնարկել «Արցախը», որն Արթիկում 2 հաղթանակ է տոնել «Նաիրիի» (92-50) եւ «Արթիկի» (73-68) նկատմամբ: «Արթիկը» 81-36 հաշվով հաղթել է «Նաիրիին»:

Կանանց մրցաշարի 7 մասնակիցները եւս մրցում են Արթիկում եւ Գյումրիում: Հաջող է մեկնարկել «Էրեբունին», որն Արթիկում հաջորդաբար պարտության է մատնել «Սլավոնականին» (57-53), «Վանաձորին» (95-22) եւ «Արթիկին» (80-32):

Գյումրիում էլ տեղի բասկետբոլիստուհիները հաղթանակով են ավարտել հանդիպումները «Արցախի» (91-51) եւ «Նաիրիի» (103-35) նկատմամբ:

Մյուս հանդիպումներում գրանցվել են հետեւյալ արդյունքները՝ «Սլավոնական»-«Վանաձոր»՝ 100-23, «Սլավոնական»-«Արթիկ»՝ 78-39, «Վանաձոր»-«Արթիկ»՝ 28-78, «Արցախ»-«Նաիրի»՝ 82-71:

## Գոլերի քանակով Մեսին հավասարվեց Մարադոնային



«Բետիսի» դարպասը գրավելով 2 անգամ, Լիոնել Մեսին պաշտոնական մրցումներում խփած գոլերի քանակով (345) հավասարվեց իր լեգենդար հայրենակից Դիեգո Մարադոնային: Վերջինս 116 գոլ է խփել «Արգենտինոս Խունիորսում», 35 գոլ՝ «Բոկա Խունիորսում»: «Բարսելոնում» անցկացրած 58 հանդիպումներում Մարադոնան 38 անգամ գրավել է մրցակիցների դարպասները: Իտալական «Նապոլիում» նրա հաշվին 115 գոլ է գրանցված, 7 անգամ էլ Մարադոնան աչքի է ընկել «Սեւիլիայում»: Արգենտինայի ազգային հավաքականում Մարադոնան 34 գոլի հեղինակ է:

Մեսին «Բարսելոնում» խփել է 313 գոլ, 32 անգամ էլ աչքի է ընկել Արգենտինայի ազգային հավաքականում

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

## 2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ (ԸՍՏ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ)

| Ծածկագիր | Մասնագիտության անվանումը | Ընդունելության քննությունները | | | | Ընդունելության տեղ/այդ թվում | | | | Ուսման վարձը հազար դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մրցութային | | | ոչ մրցութային | անվճար | այդ թվում | | վճարովի ԱՏ | |
| | | | | | | | ԲԶ | ՆՊ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 150 | Մաթեմատիկա | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* | 3 | 1 | 1 | 50 | 260 |
| 151 | Ֆիզիկա | Ֆ(գ) | Մ(գ)** | | Հլգ(գ)* | 2 | 1 | | 23 | 260 |
| 152 | Քիմիա | Ք(գ) | Մ(գ)** կամՖ(գ)** | | Հլգ(գ)* | 2 | 1 | | 18 | 260 |
| 153 | Կենսաբանություն | Կ(գ) | Ք(գ)** կամՖ(գ)** | | Հլգ(գ)* | 3 | 1 | 1 | 32 | 260 |
| 154 | Աշխարհագրություն | Ա(գ) | Մ(գ)** | | Հլգ(գ)* | 3 | 1 | 1 | 35 | 270 |
| 155 | Էկոլոգիական քիմիա (Բնապահպանություն և բնօգտագործում) | Ք(գ) կամԿ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* | 1 | | | 21 | 260 |
| 156 | Պատմություն | ՀԺՊ(գ) | Օտլ(գ) կամԸՊ(գ) | Հլգ(գ) | | 5 | 1 | 1 | 85 | 315 |
| 157 | Իրավագիտություն (մանկավարժություն) | ՀԺՊ(գ) | Օտլ(գ) կամԸՊ(գ) | Հլգ(գ) | | 2 | | | 60 | 585 |
| 158 | Լրագրություն (հեռուստալրագրություն) | ՀԼՀ | ՀԼՏՊ | Հլգ(գ) | | 1 | | | 25 | 340 |
| 159 | Լրագրություն (ռադիոլրագրություն) | ՌԼՀ | ՌԼՏՊ | Հլգ(գ) | | 1 | | | 15 | 340 |
| 160 | Հայոց լեզու և գրականություն | Հլգ(բ) | Հլգ(գ) | Օտլ(գ)**կամ ՀԺՊ(գ)** | | 3 | | 1 | 70 | 270 |
| 161 | Անգլերեն լեզու և գրականություն | Անգլ(բ) | Անգլ(գ) | Հլգ(գ) | | 2 | | | 73 | 445 |
| 162 | Գերմաներեն լեզու և գրականություն | Գլ(բ) | Գլ(գ) | Հլգ(գ) | | 1 | | | 14 | 410 |
| 163 | Ֆրանսերեն լեզու և գրականություն | Ֆրլ(բ) | Ֆրլ(գ) | Հլգ(գ) | | 1 | | | 14 | 410 |
| 164 | Իսպաներեն լեզու և գրականություն | Օտլ(բ) | Օտլ(գ) | Հլգ(գ) | | 1 | | | 29 | 410 |
| 165 | Մշակութաբանություն | ՀԺՊ(գ) կամԸՊ(գ) | Հլգ(գ) | Օտլ(գ)** | | 2 | | | 28 | 320 |
| 166 | Ռուսաց լեզու և գրականություն | Ռլգ(բ) | Ռլ(գ) | | Հլգ(գ)* | 2 | | 1 | 40 | 270 |
| 167 | Սոցիալական աշխատանք | Հլգ(գ) | Օտլ(գ) | | Մ(գ)* | 2 | | | 30 | 330 |
| 168 | Ինֆորմատիկա | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* | 3 | 1 | | 35 | 320 |
| 169 | Բնագիտություն | Ք(գ) կամ Ֆ(գ) | Մ(գ)** | | Հլգ(գ)* | 2 | | | 20 | 260 |
| 170 | Տեխնոլոգիա և ձեռնարկչություն | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* | 3 | 1 | 1 | 30 | 305 |
| 171 | Երաժշտական կրթություն | ԵՏՍ (գ,բ) | ՆԵՍԿ և երգ | | Հլգ(գ)* | 2 | | | 35 | 380 |
| 172 | Կերպարվեստ և գծագրություն | Գծն | Գն | | Հլգ(գ)* | 3 | 1 | | 60 | 390 |
| 173 | Մանկավարժություն և հոգեբանություն | Հլգ(գ) | Օտլ(գ) | Կ(գ)** | | 2 | | 1 | 70 | 375 |
| 174 | Մանկավարժություն և հոգեբանություն (նախադպրոցական) | Հլգ(գ) | Օտլ(գ) | Կ(գ)** | | 2 | | | 45 | 330 |
| 175 | Զինվորական մանկավարժություն և հոգեբանություն | Հլգ(գ) | Օտլ(գ) | | Մ(գ)* | | | | 20 | 325 |
| 176 | Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) | Հլգ(գ) | Մ(գ)** | | | 2 | | | 60 | 445 |
| 177 | Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության, ռուսաց լեզվի ուսուցմամբ) | Ռլ(գ) | Մ(գ)** | | Հլգ(գ)* | 1 | | | 9 | 410 |
| 178 | Մանկավարժություն և մեթոդիկան (նախադպրոցական կրթության) | Հլգ(գ) | Օտլ(գ) | | | 2 | | | 20 | 355 |
| 179 | Սոցիալական մանկավարժություն | Հլգ(գ) | Մ(գ)** | | | 2 | | | 35 | 330 |
| 180 | Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն (Տիֆլոմանկավարժություն) | Հլգ(գ) | Կ(գ)** | | | 1 | | | 23 | 270 |
| 181 | Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն (Սուրդոմանկավարժություն) | Հլգ(գ) | Կ(գ)** | | | 1 | | | 23 | 270 |
| 182 | Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն (Օլիգոֆրենոմանկավարժություն) | Հլգ(գ) | Կ(գ)** | | | 1 | | | 23 | 270 |
| 183 | Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն (Լոգոպեդիա) | Հլգ(գ) | Կ(գ)** | | | 2 | | | 45 | 325 |
| 184 | Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն (Հատուկ հոգեբանություն) | Հլգ(գ) | Կ(գ)** | | | 2 | | | 35 | 325 |
| 185 | Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն (Էրգոթերապիա) | Հլգ(գ) | Կ(գ)** | | Անգլ(գ)* | 1 | | | 12 | 270 |
| 186 | Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն (Նախադպրոցական) | Հլգ(գ) | Կ(գ)** | | | 1 | | | 16 | 270 |
| 187 | Մանկավարժություն և սոցիոլոգիա | Հլգ(գ) | Օտլ(գ) | | Մ(գ)* | 2 | | | 38 | 355 |
| 188 | Ռեժիսուրա (մասսայական հանդիսությունների ռեժիսուրա) | ԴՎ | Ռեժ | | Հլգ(գ)* | 1 | | | 16 | 380 |
| 189 | Ռեժիսուրա (հեռուստաֆիլմերի և հեռուստածրագրերի ռեժիսուրա) | ԴՎ | Ռեժ | | Հլգ(գ)* | 2 | | | 15 | 380 |
| 190 | Պարարվեստ (ժողովրդական և դասական պարեր, ժամանակակից պարահանդեսային պարեր) | Դպար | ՀԺ կամԺՊ պար | | Հլգ(գ)* | 2 | | | 30 | 380 |
| 191 | Կիրառական արվեստ | Գծն | Կոմ | | Հլգ(գ)* | 1 | | | 35 | 390 |
| 192 | Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ | Հլգ(գ) | Օտլ(գ) | ՀԺՊ(գ)** | | 2 | | | 20 | 265 |
| 193 | Սոցիալ-մշակութային գործունեություն (թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն) | Հլգ(գ) | Օտլ(գ) | ՀԺՊ(գ)** | | 2 | | | 23 | 265 |
| 194 | Սոցիալ-մշակութային գործունեություն (փողային և էստրադային նվագախմբի ղեկավարում) | ՄԳԴ(բ) | ՍԵՏ(բ) | | Հլգ(գ)* | 2 | | | 13 | 260 |
| 195 | Սոցիալ-մշակութային գործունեություն (ժողգործիքների նվագախմբերի ղեկավարում) | ՄԳԴ(բ) | ՍԵՏ(բ) | | Հլգ(գ)* | 2 | | | 13 | 260 |
| 196 | Սոցիալ-մշակութային գործունեություն (գեղարվեստական լուսանկարչություն) | ԳԼՀ(բ) | ՄՀ(բ) | | Հլգ(գ)* | 2 | 1 | | 15 | 385 |
| 197 | Սոցիալ-մշակութային գործունեություն (օպերատորություն) | ՕՊՀ(բ) | ՄՀ(բ) | | Հլգ(գ)* | 2 | | | 15 | 385 |
| 198 | Սոցիալ-մշակութային գործունեություն (կառավարում՝ մենեջմենթ) | ՍՄԳԿ(գ,բ) | ՄՊ(բ) | | Հլգ(գ)* | 3 | | | 25 | 385 |
| 199 | Կերպարվեստի պատմություն և տեսություն | ԸԱՊ(բ) | ԿՏ(գ) | | Հլգ(գ)* | 2 | | | 23 | 325 |
| 200 | Հագուստի մոդելավորում | Գծն | Կոմ | | Հլգ(գ)* | | | | 30 | 395 |

***Ծանոթություն.***

▼ Համալսարան կարող են ընդունվել միջնակարգ, նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող անձինք՝ առանց տարիքային սահմանափակման:

▼ ՀՀ երկքաղաքացիները եւ օտարերկրացիները համալսարան կարող են ընդունվել ընդհանուր հիմունքներով կամ ըստ ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի:

▼ Համալսարանի համապատասխան մասնագիտության բակալավրի կրթական աստիճան ունեցող շրջանավարտները համարվում են ՀՀ հանրակրթական դպրոցի լիարժեք ուսուցիչ:

▼ Բակալավրիատում սովորող ուսանողները, սկսած 3-րդ կուրսից, իրենց մասնագիտությանը համապատասխան կարող են ստանալ հարակից մասնագիտություն:

▼ ՀՀ սահմանամերձ, լեռնային եւ բարձրլեռնային համայնքների ու դպրոցների ներկայացրած հայտերի հիման վրա մանկավարժական մասնագիտություններին հատկացված անվճար տեղերի մինչեւ 50%-ի չափով կազմակերպվում է մանկավարժական կադրերի նպատակային ընդունելություն: Նպատակային ընդունվողները մինչեւ հրամանագրումը, գործուղող եւ ընդունող կողմերի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքում են պայմանագիր:

▼ * Մեկ աստղանիշով նշված «Հայոց լեզու եւ գրականություն» ոչ մրցութային քննության գնահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:

▼ **Վճարովի ուսուցման համակարգում թափուր տեղեր առաջանալու դեպքում այդ տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների եւ քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

▼ ***Դիմորդը դիմում-հայտի հետ միասին ներկայացնում է.***

1) լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ).

2) 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի).

3) փաստաթուղթ զինվորական ծառայությանն առնչության մասին (զորակոչային տարիք ունեցող արական սեռի դիմորդներից փաստաթղթերն ընդունվում են զինվորական հաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշման առկայության դեպքում, իսկ նախկինում առողջական վիճակի կապակցությամբ տարկետում ստացածներից՝ ռազմաբժշկական կենտրոնական հանձնաժողովի նշումների առկայության դեպքում).

4) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր, կացության վկայական): Անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ.

5) զինվորական գրքույկ եւ զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունն անցած լինելու մասին.

6) արտոնություններից օգտվող դիմորդները (Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաներ, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիներ, 1-ին ու 2-րդ խմբերի, ինչպես նաեւ մինչեւ 18 տարեկան մանկուց հաշմանդամներ, առանց ծնողական խնամքի մնացած մինչեւ 23 տարեկան երեխաներ) ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր.

7) միջազգային եւ հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմներ.

8) փաստաթղթերը ձեւակերպելու, ինչպես նաեւ ներբուհական յուրաքանչյուր քննության մասնակցելու համար՝ 1500-ական դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիր:

▼ Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են տվյալ տարվա մայիսի 5-ից հունիսի 1-ը, ժամը 18:00՝ շաբաթվա բոլոր օրերին (բացի մայիսի 9-ից եւ 12-ից):

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ**

| | | | |
|---|---|---|---|
| (բ) | բանավոր | ՍՄԳԿ | Սոցիալ-մշակութային գործունեության կազմակերպում |
| ԿՏ | Կերպարվեստի տեսություն | Օտլ | Օտար լեզու |
| (գ) | գրավոր | ԳԼՀ | Գեղարվեստական լուսանկարչության հիմունքներ |
| ԸՊ | Ընդհանուր պատմություն | Հլգ | Հայոց լեզու եւ գրականություն |
| Ա | Աշխարհագրություն | ՀԼՀ | Հեռուստալրագրության հիմունքներ |
| ՀԺՊ | Հայ ժողովրդի պատմություն | Գծն | Գծանկար |
| Կ | Կենսաբանություն | ՀԼՏՊ | Հեռուստալրագրության տեսություն եւ պատմություն |
| ԵՏՍ | Երաժշտության տեսություն եւ սոլֆեջիո | Գն | Գեղանկար |
| Մ | Մաթեմատիկա | ՌԼՀ | Ռադիոլրագրության հիմունքներ |
| ՆԵՍԿ | Նվագարաններով երաժշտական ստեղծագործության կատարում | Կոմ | Կոմպոզիցիա |
| Ք | Քիմիա | ՌԼՏՊ | Ռադիոլրագրության տեսություն եւ պատմություն |
| Ռլ | Ռուսաց լեզու | Դպար | Դասական պար |
| Ֆ | Ֆիզիկա | ՄՀ | Մասնագիտական հարցազրույց |
| Ռլգ | Ռուսաց լեզու եւ գրականություն | ՀԺ | Հայկական ժողովրդական պար |
| Անգլ | Անգլերեն լեզու | ՄԳԴ | Մասնագիտական գործիք եւ դիրիժորություն |
| ԴՎ | Դերասանի վարպետություն | ԺՊ | Ժամանակակից պարահանդեսային պար |
| Ֆրլ | Ֆրանսերեն լեզու | ՕՊՀ | Օպերատորության հիմունքներ |
| Ռեժ | Ռեժիսուրա | ԸԱՊ | Ընդհանուր արվեստի պատմություն |
| Գլ | Գերմաներեն լեզու | ՄՊ | Մշակույթի պատմություն |

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 59-70-69 հեռախոսահամարով, վեբկայք՝ www.armspu.am

***ՌԵԿՏՈՐԱՏ***

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 9.5.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: